# ԾՐԱԳԻՐ

## ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

623
Ծ-89

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 9

623
Ծ-89

# ԾՐԱԳԻՐ

## ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

13121

14 MAY 2013

531
49

**ПРОГРАММА**

Подготовки рядового состава групп самозащиты жилых домов

Гиз. Арм. ССР, Ереван, 1939

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Ինքնապաշտպանության խմբերի շարքային կազմի պատրաստման նոր ծրագիրը կազմված է այն հաշվով, վոր նրա մարտիկներն արդեն հանձնել են առաջին աստիճանի «Պատրաստ ՀՈՔՊ-ի համար» կրծքանշանի նորմաները, իսկ սանիտարական ողակի մարտիկները՝ «Պատրաստ սանիտարական պաշտպանության համար» առաջին աստիճանի կրծքանշանի նորմաները:

Յեթե ինքնապաշտպանության խմբերի մարտիկները դեռ չեն հանձնել առաջին աստիճանի «Պատրաստ ՀՈՔՊ-ի համար» կրծքանշանի նորմաները, ապա պետք է նախ սկսել սովորեցնել առաջին աստիճանի «Պատրաստ ՀՈՔՊ-ի համար» նորմաները, ըստ Պաշավիաքիմի ԿԽ 24 ժամանոց ծրագրի և հետո անցնել այս ծրագրի ուսուցմանը: Նույնը պետք է կատարել նաև սանիտարական ողակի մարտիկների նկատմամբ՝ յեթե նրանք չեն հանձնել առաջին աստիճանի ՊՍՊ-ի նորմաները, ապա ուսուցումը պետք է սկսել ըստ այդ նորմաների:

2. Նոր ծրագիրը կազմված է նաև այն հաշվով, վոր ողակների հրամանատարները, խմբի պետը և քաղղեկը իրենք անցել են անհրաժեշտ պատրաստություն Պաշավիաքիմի ՀՈՔՊ-ի ուսուցման կետերում: Խմբի մարտիկներին սովորեցնում են նույն խմբի պետկազմին պատկանող անձերը, և վոչ թե պատահական «դասախոսներ», ինչպես այդ տեղի յե ունեցել առաջներում: Քաղաքական ուսուցումը վարում է խմբի քաղղեկը: Ողակների մասնագիտական պատրաստությունը իրագործում են ողակների հրամանատարները (յուրաքանչյուրն իր ողակում), իսկ ամբողջ խմբակի ընդհանուր պատրաստությունը վարում է ինքը, ինքնապաշտպանության խմբի պետը: Հետևաբար, խաղաղ ժամանակ խմբակին սովորեցնում են այն անձերը, վորոնք պատերազմի ժամանակ պետք է ղեկավարեն նրա մարտական աշխատանքը:

3. Ամբողջ ծրագիրը ստորաբաժանված ե հետևյալ հատվածների՝ ա) քաղպատրաստություն—10 ժամ, բ) մասնագիտական պատրաստություն (պատրաստություն ըստ ողակների)—20 ժամ և գ) ընդհանուր խմբի պատրաստություն— 10 ժամ: Ընդամենը— 40 ժամ: Յուրաքանչյուր պարապմունքը նկատի յե առնըված յերկու (ամենաշատը յերեք) ժամվա համար: Յեթե ընդունենք, վոր խումբը հնգորյակում մի անգամ ե պարապելու, այդ դեպքում ամբողջ ծրագիրը ավարտվելու յե 4 ամսվա ընթացքում, իսկ հնգորյակում յերկու պարապմունք լինելու դեպքում ուսուցումը կարելի յե ավարտել 2 ամսում:

Պարապմունքի հաջորդականությունը պետք ե լինի հետևյալը. նախ՝ պետք ե վերջացնել ողակային պատրաստությունը, ապա անցնել ընդհանուր խմբի պատրաստությունը: Քաղաքական պատրաստությունը պետք ե ընթանա ողակների պատրաստության հետ միաժամանակ (այսինքն, մի ողակային պարապմունք, հաջորդը—քաղպատրաստություն, հետո նորից ողակի պատրաստություն և այլն):

4. Նոր ծրագրի համաձայն բոլոր խմբերի մարտիկների ուսուցումը պետք ե կառուցվի գործնական պարապմունքների ու վարժությունների վրա և բացառապես իրենց տանը և այդ տանը կից հողամասում: Այս պատճառով ծրագիրը բարդացնել լրացուցիչ հարցերի մշակումով (որինակ, փոխադարձ գործողություն այլ խմբերի հետ, աշխատանք այլ ռայոններում և այլն) կարիք չկա: Այս հարցերը պետք ե մշակվեն յերկրորդ հերթին, յերբ խումբը կվերջացնի տարրական պատրաստությունը, մասնակցելով թաղային, թաղամասային, ռայոնական և քաղաքային վարժություններին:

Միաժամանակ վոչ մի դեպքում չի կարելի դիմել ուսուցման ծրագիրը կրճատելուն կամ գործնական պարապմունքները և վարժությունները «դասախոսություններով» և «զրույցներով» փոխարինելուն:

Պրակտիկան, պրակտիկան և պրակտիկան պետք ե բռնի գլխավոր տեղը ինքնապաշտպանության խմբերի ուսուցման գործում:

Այն դեպքում, յերբ տան մեջ ՀՈՊ-ի համար դեռ ամեն ինչ պատրաստ չե (որինակ, չի կազմակերպված լուսաքողարկումը, չի մաքրված չերդակը, չի հավաքած ավազը և այլն), ապա



ինքնապաշտպանության խմբի կազմը պետք ե առաջին հերթին ձեռնարկի տանը ՀՈՔՊ-ի համար լիովին պատրաստ լինելու գործին: Ինքնապաշտպանության խումբը, բնակելի տան Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության հետ միասին, պետք ե ոգնի տան ՀՈՊ-ի պետին կարճ ժամանակամիջոցում տունը ՀՈՔՊ-ի համար լիովին նախապատրաստելուն, համաձայն այն պահանջների, վորը սահմանել ե Պաշավիաքիմի Կենտրոնական Խորհուրդը՝ ըստ ՀՈՔՊ-ի կոլեկտիվ կրծքանշանի նորմաների:

5. Պարապմունքներն անցկացնելու համար խումբը պետք ե ունենա տաբելով նախատեսված գույք (տես եջ 67) և իմիտացիոն նյութեր: Խումբն այս նյութերով ապահովելը՝ հանդիսանում ե տան ՀՈՊ-ի պետի պարտականությունը և Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպությունների ու Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերության հոգացողության առարկան: Խումբը միշտ այնքան ավելի լավ պատրաստված կլինի, վորքան ուսուցման ժամանակ ավելի քիչ կդիմեն դասախոսությունների և պայմանականությունների և վորքան ուսուցումը ավելի շատ կմոտենա աշխատանքի ռեալ պայմաններին: Յեթե խումբը չի ունենում, որինակ, գազահանման անիվավոր գործիք, ապա խումբը պետք ե ինքը պատրաստի մի քանի մաղպատղարակ և այսպես պետք ե վարվեն մյուս դեպքերում:

6. Ինքնապաշտպանության խմբի յուրաքանչյուր մարտիկ անպայման պետք ե ունենա հետևյալ գրականությունը՝

1) «Մեր Հայրենիքը». հայերեն, Քաղհրատ, 1938 թ.

2) «Պատրաստ յեղիր ՀՈՔՊ-ի համար»— ձեռնարկ առաջին աստիճանի ՀՈՔՊ-ի նորմաները հանձնողների համար: Պետհրատ, 1939 թ.

3) «Группа самозащиты»— հուշաթերթ-հրահանգ ինքնապաշտպանության խմբերի համար: Պաշավիաքիմի Կենտխորհրդի հրատարակություն:

Բացի այդ, կարելի յե օգտվել հետևյալ բրոշյուրներից՝ «ПВХО жилого дома», Ռազմ. հրատ. 1937 թ. և «Что должны знать наблюдатели—связные группы самозащиты», Ռազմ. հրատի 1936 թ. հրատարակություն: Սանիտարական ողակի մարտիկների համար նույնպես պետք ե ունենալ հետևյալ բրոշյուրները՝ «Работа санитарного поста ПВО», հրատարակություն՝ ԿԽ-ի և ԿՄ-ի Սանբաժնի, 1937 թ. և «Готов к санитарной обороне»,

ձեռնարկ՝ առաջին աստիճանի ՊՍՊ-ի կրծքանշանի նորմաների հանձնման համար։ Բիոմեդգիզի հրատ. 1937 թ.։

Խմբի պետկազմը ղեկավարելու համար պետք է ունենա շուտով լույս ընծայելու համար պատրաստվող «Противовоздушная оборона жилого дома» գիրքը, հրատ. Պաշտպխաքիմի ԿԽ-ի 1938 թ.։ Մինչև այս գրքի լույս ընծայելը պետք է օգտվել՝ «Противовоздушная и противохимическая оборона» գրքից, վորը ձեռնարկ է հրահանգիչների համար։ Ռազմ. հրատ 1936 թ. (դուրս հանելով 3–4 էջերը) և «Осоавиахим на учениях ПВХО» բրոշյուրը— ԽՍՀՄ-ի Պաշտպխաքիմի ԿԽ-ի հրատարակություն, 1937 թ.

7. Այս բրոշյուրի վերջում բերված է խմբի նվազագույն տիպային հաստիքը (26 մարդ)։ Ուսուցման ծրագիրը նկատի ունի մոտավորապես մեկ ու կես, յերկու անգամ ավելի մեծ կազմ ունեցող խումբ, այսինքն, 40–50 մարդ՝ մշտապես պատրաստված մարդկանց ռեզերվ ունենալու համար, մարդիկ, վորոնք կարողանան փոխարինել տնից հեռացած կամ օդային տագնապի ժամանակ հիվանդացած մարտիկներին։

Պետք է նաև հիշել, վոր տան և նրա բնակչության ՀՕՊ-ը պետք է լինի վոչ միայն ինքնապաշտպանության խմբի, այլ շենքի բոլոր բնակիչների գործը։ Դրա համար էլ բնակիչներին պետք է լայն կերպով ներգրավել տան ՀՕՊ-ի ուսուցման գործի մեջ։

Խումբը պատրաստելիս, պետք է յելնել շարքային կազմից իր սոցիալիստական հայրենիքին՝ նրա խորհրդային կառավարությանը և Լենինի—Ստալինի կուսակցությանը նվիրված, վճռական, իրենց գործը գերազանց իմացող, ձեռներեց մարտիկներ պատրաստելու անհրաժեշտությունից, մարտիկներ, վորոնք ընդունակ լինեն ամեն մի րոպե՝ ավերածությունների ու փլվածքները վերացնելու, հրդեհները հանգցնելու և այլի համար, տան բնակիչներից կազմված խմբերը ղեկավարելու այսինքն՝ նրանք պետք է լինեն (յուրաքանչյուրն ըստ իր մասնագիտության) տան բնակիչներին հրահանգողներ։

8. Հակագազերն ու մաշկի պաշտպանության միջոցները օգտագործելու ասպարեզում ավելի լավ մարզվելու նպատակով յուրաքանչյուր պարապմունքի վերջում, պետք է 20–30 րոպեյով հակագազային մարզանք կատարել, իսկ պաշտպանական հագուստ ունեցող օղակների մարտիկների համար, յեթե այս հա-



գուստի օգտագործման առթիվ ծրագրում հատուկ վերապահում չէ արված, պետք է կատարել պաշտպանական հագուստի մեջ մնալու 10–15 րոպե տեվող մարզանք։

Պաշտպանական հագուստի մեջ աշխատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ ջերմաստիճանի պայմանները։ Յեթե ջերմաստիճանը ավելի ցածր է $-15^{0}$C-ից և ավելի բարձր է $+20^{0}$C-ից, պաշտպանական հագուստների մեջ չպետք է աշխատել։ $+15^{0}$ C ջերմաստիճանից մինչև $+20^{0}$C ջերմաստիճանը, ինչպես և $-5^{0}$ C ջերմաստիճանից մինչև $-15^{0}$ C ջերմաստիճանը պաշտպանական հագուստի մեջ մնալ կարելի յե վոչ ավելի քան 1 ժամ 30 րոպե։ $-5^{0}$ C ջերմաստիճանից մինչև $+15^{0}$ C ջերմաստիճանը, պաշտպանական հագուստի մեջ մնալը կարելի յե հասցնել 2 ժամի։

Պաշտպանական հագուստի մեջ մնալու և աշխատելու մարզանքը պետք է սկսել 10–15 րոպեյից, աստիճանաբար այն հասցնելով 1 ժամի, և ապա (քիմիկոսների համար) մինչև 2 ժամի։ Աշխատելու ասպարեզում ավելի քան 30 րոպե տեվող մարզանքի դեպքում, բժշկի ներկայությունը պարտադիր է։

Վորպես կանոն ինքնապաշտպանության խմբերի քիմիական ու հրշեջ օղակներում աշխատելու համար, անհրաժեշտ է ընտրել ամենատառողջ և ուժեղ մարդկանց։ Սովորողները պաշտպանական հագուստով աշխատանք սկսելուց առաջ պետք է քննվեն բժշկի կողմից։

Ձմեռն աշխատելիս (յերբ ջերմաստիճանը $-10^{0}$ մինչև $-15^{0}$ է) պաշտպանական հագուստը պետք է հագնել տաք սպիտակեղենի, շուլքիների կամ գուլպաների վրա, վիզը պետք է փաթաթել տաք շարֆով, իսկ յեթե յեղանակը տաք է պետք է հագնել ամառային սպիտակեղենի և ամառային շուլքիների (ավելի լավ է փաթաթանների) վրա։

9. Ինքնապաշտպանության խմբի պետկազմը պարապմունքների համար պետք է խնամքով պատրաստվի։ Խմբի օղակների յուրաքանչյուր պարապմունքից առաջ ինքնապաշտպանության խմբի պետը պարտավոր է անձամբ հրահանգավորել օղակի հրամանատարին, թե ինչպես պետք է անցկացնել հերթական պարապմունքը և քաղղեկի հետ միասին պետք է ստուգի, թե այդ պարապմունքը ինչպես է կատարվում։

Խմբակային հերթական յուրաքանչյուր պարապմունքից առաջ ինքնապաշտպանության խմբի պետը պարտավոր է ներկա-

յանալ իր տեղամասի ՀՈՔՊ-ի ուսուցման կայանի պետին հրահանգավորման համար, իսկ խմբի քաղղեկը՝ ՀՈՔՊ-ի ուսուցման կայանի քաղղեկին:

Ինքնապաշտպանության խմբի թե՛ պետը և թե՛ քաղղեկը պարտավոր են ճշտապահորեն հաճախել հրամանատարական ուսուցմանը, վորը կազմակերպվում է ՀՈՔՊ-ի ուսուցման կայանի կողմից ինքնապաշտպանության խմբերի պետկազմի համար:

10. Ինքնապաշտպանության խումբը ուսումնական ծրագիրը ավարտելուց հետո անց է կացնում ստուգողական վարժություն, վորի համար Պաշավիաքիմի շրջխորհուրդը նշանակում է Պաշավիաքիմի շրջխորհրդի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերության տեղական կոմիտեյի և տեղական քաղաքացիական ՀՈՊ-ի որգանների ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով, վորը և անց է կացնում խմբակի ստուգողական վարժությունը:

Ստուգողական վարժության արդյունքները պետք է գրի առնվեն հատուկ ակտի մեջ:

Ակտը ներկայացվում է Պաշավիաքիմի շրջխորհրդին և տեղական ՀՈՊ-ի տեղամասի պետին:

Պաշավիաքիմի ԿԽ-ի ՀՈՔՊ-ի վարչությունը խնդրում է ինքնապաշտպանության խմբի պատրաստման նոր ծրագրի ոգտագործման գործնական փորձի մասին յեղած բոլոր հաղորդումները, դիտողությունները ու առաջարկությունները ուղարկել հետևյալ հասցեյով՝ Москва, Раушская Набережная, д. 22, վորպեսզի ծրագիրը վերահրատարակման ժամանակ մտցվեն անհրաժեշտ ուղղումներ և լրացումներ:

ԽՍՀՄ ՅԵՎ ՌԽՖՍՀ ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ
ԿԽ ՀՈՔՊ-Ի ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



# 1. ՔԱՂՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ—10 ԺԱՄ

## ԹԵՄԱ 1-ԻՆ

### ԽՍՀՄ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿԻՐՆ Է —1 ժամ

Աշխարհում ԽՍՀՄ-ն սոցիալիզմի հաղթանակած առաջին յերկիրն է: Խորհրդային ու կապիտալիստական կարգերի հակադրությունը: Խորհրդային տնտեսության հիմքը՝ սոցիալիստական սեփականությունն է: Սոցիալիզմը կառուցեցին բանվորներն ու գյուղացիները Լենին-Ստալինի բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Խորհուրդների յերկիրը, նրա բնությունը և բնակչությունը: Մեր յերկիրը աշխարհումս ամենամեծ յերկիրն է: ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը և սահմանները: Իր բնական հարստություններով ԽՍՀՄ-ն աշխարհում առաջին տեղն է գրավում: Ոգտակար հանածոներն ու նրանց հանքավայրերը: ԽՍՀՄ-ի 183 միլիոնանոց բնակչությունը:

**Գրականություն:** «Մեր հայրենիքը»: Գլուխ I, Քաղհրատ 1938 թ.

## ԹԵՄԱ 2-ՐԴ

### ԽՍՀՄ հզոր ինդուստրիալ պետություն է—1 ժամ

Մինչհեղափոխական հին Ռուսաստանի արդյունաբերության հետամնացությունը: Ոտարերկրյա կապիտալիստների տիրակալությունը Ռուսաստանում: Ռուսաստանի կիսագաղութային կախումն արտասահմանյան կապիտալից: Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի պայքարը իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների տարիներին, քայքայված արդյունաբերությունը վերականգնելու համար: Կուսակցության յերկրի ինդուստրացման գլխավոր գիծը: Ստալինյան առաջին հնգամյակը: Տրոցկիստների ու աջերի ջախջա-

խումբ, վորոնք փորձում եյին դավաճանորեն վիժեցնել սոցիալիզմի շինարարությունը: ԽՍՀՄ արդյունաբերական ծաղկումը առաջին հնգամյակում: Հնգամյակի հաջող կատարման շնորհիվ ԽՍՀՄ՝ ագրարային յերկրից ինդուստրիալ յերկրի վերածվելը: Յերկրորդ հնգամյակի քաղաքական ու տնտեսական հիմնական խնդիրը: Այդ խնդիրների հաջող կատարումը: ԽՍՀՄ-ում կառուցվել է սոցիալիստական հասարակություն, հասարակություն առանց շահագործման ու ճնշման:

Սոցիալիստական արդյունաբերության հսկայական վերելքը: Մեր հայրենիքի վերածվելը հզոր ինդուստրիալ պետության:

**Գրականություն:** «Մեր հայրենիքը» Գլուխ II:

## ԹԵՄԱ 3-ՐԴ

### Սոցիալիզմի հաղթանակը գյուղում—1 ժամ

Կալվածատիրական հողատիրությունը և գյուղատնտեսության հետամնացությունը ցարական Ռուսաստանում: Ցարը առաջին կալվածատեր: Կալվածատիրական ու կուլակային ստրկությունը գյուղացիության վզին: Յեկեղեցին շահագործման գործիք: Ցարիզմի ժամանակ՝ գյուղացիության կարիքը, թշվառությունը և իրավազրկությունը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Խորհրդային իշխանության կողմից կալվածատիրական, ցարական և վանքապատկան հողերի հանձնումը գյուղացիությանն անվճար ոգտագործման համար և հողի մասնավոր սեփականության վերացումը: Գյուղացիական մանր տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման, նրանց կոլխոզներում ընդգրկելու անհրաժեշտությունը: Լենինյան-ստալինյան ինդուստրացման քաղաքականության հաղթանակը և կոլտնտեսային շարժման բուռն վերելքը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության լիկվիդացիան: Կոլտնտեսության համար կուսակցության պայքարն ընդդեմ ժողովրդի թշնամիների՝ կուլակների, աջերի, տրոցկիստների, ձախ շեղման կողմնակիցների, վնասարարների և այլ դիմադրության: Կոլտնտեսային կարգի հաղթանակը: Կոլտնտեսային կյանքի Ստալինյան կանոնադրությունը:

Ընկեր Ստալինի՝ 7-8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու առաջադրանքի հաջող կատարումը: Կոլտնտեսային գյուղի ունեվորության ու կուլտուրականության աճումը:

**Գրականություն:** «Մեր հայրենիքը»: Գլուխ III:



## ԹԵՄԱ 4-ՐԴ

### Նոր տեխնիկան յեվ նոր մարդիկ—1 ժամ

Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը: Թեթև և սննդի արդյունաբերության սարքավորումը նոր մեքենաներով: Յերկաթուղային տրանսպորտը ընկեր Կագանովիչի ղեկավարությամբ դարձավ ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղը: Ավտոմոբիլային և ավիացիոն տրանսպորտը: Նոր քաղաքներ և քաղաքների վերակառուցումը: ԽՍՀՄ արտաքին առևտուրը:

ԽՍՀՄ աշխատավորությունն աշխատում է վոչ թե շահագործողների համար, այլ իր համար, խորհրդային հասարակության համար: Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի: Աշխատանքը— փառքի և պատվի գործ է: Ստախանովի, Բուսիգինի, Կրիվոնոսի, Դեմչենկոյի և ուրիշների որինակը: Ստախանովականները տեխնիկայի հեղափոխականներն են: Ստախանովյան շարժումը նախապատրաստում է պայմաններ կոմունիզմի առաջին աստիճանից բարձր աստիճանին անցնելու համար: Բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու և ինժեներա-տեխնիկական աշխատողների մակարդակին հասցնելու խնդիրը:

**Գրականություն:** «Մեր հայրենիքը»: Գլուխ IV:

## ԹԵՄԱ 5-ՐԴ

### Մեր յերկրի մարդիկ ապրում են ուրախ, յերջանիկ կուլտուրական կյանքով—1 ժամ

Կոմունիստական կուսակցության ու խորհրդային իշխանության հոգատարությունը աշխատավոր մարդու համար: Ինդուստրացման քաղաքականության հաղթանակը՝ մասսաների բարեկեցության աճման հիմքն է: Աշխատավորության ապահովվածությունը ապրանքներով: Ժողովրդական յեկամտի աճումը և այդ յեկամուտը աշխատավորության շահերի համար ոգտագործելը: Յերկրի պաշտպանության ամրացումը, խաղաղ աշխատանքի պահպանումը:

ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր աշխատավորի համար ապահովված է աշխատանք: Աշխատավարձի աճում, գների իջեցումը: Գործազրկությունը և աշխատավարձի իջեցումը կապիտալիստական յերկրներում: Կոլտնտեսությունների յեկամտաբերությունը և կոլտնտեսականների ունեվորությունը:

Հին Ռուսաստանի անկուլտուրականությունը: Կուլտուրայի վերելքը ԽՍՀՄ-ում: Անգրագիտության վերացումը: Կրթության մատչելիությունը: Խորհրդային գիտության հաջողությունները: Աշխատավորների կենցաղի փոփոխությունը: Կինը սոցիալիստական շինարարության լիիրավ մասնակից է: Հոգատարություն մոր ու մանկան համար: Խորհրդային յերեխաների յերջանիկ մանկությունը: Յերիտասարդության աշխատանքը և ուսումը:

**Գրականություն**։ «Մեր հայրենիքը»: Գլուխ V և VI:

## ԹԵՄԱ 6-ՐԴ

### Խորհրդային ժողովուրդների մեծ ընտանիքը—3 ժամ

Ազգային ճնշումը ցարիզմի օրով: Նվաճված և հնազանդեցված ժողովուրդների ճնշումը: Ազգամիջյան թշնամանքի բորբոքումը: Ազգային ծայրամասերի հետամնացությունը: Ցարական Ռուսաստանը— ժողովուրդների բանտ:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ջարդեց ազգային ճնշումը: ԽՍՀՄ-ում ազգությունների իրավահավասարությունը: Ռուս բանվոր դասակարգի օգնությունը նախկինում ճնշված ժողովուրդների զարգացմանը: Արագ տնտեսական աճում և ազգային ծայրամասերի ինդուստրացումը: Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկումը:

ԽՍՀՄ-ը իրավահավասար սոցիալիստական հանրապետությունների կամավոր Միություն է:

Սոցիալիստական բազմազգ պետության անխորտակելիությունը: Միութենական տասնմեկ հանրապետությունները: Յուրաքանչյուր հանրապետության տնտեսական աշխարհագրության մասին կարճ տեղեկություններ:

**Գրականություն**։ «Մեր հայրենիքը»: Գլուխ VII:

## ԹԵՄԱ 7-ՐԴ

### Բանվորների յեվ գյուղացիների սոցիալիստական պետությունը—2 ժամ

Ռուսաստանի բնակչության դասակարգային կազմը նախքան հեղափոխությունը: Բնակչության դասակարգային կազմը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ում վոչնչացված են շահագործող դասակար-



գերը: Բանվորությունը և գյուղացիությունը խորհրդային հասարակության՝ բարեկամ յերկու դասակարգեր են: Խորհրդային ինտելիգենցիան:

ԽՍՀՄ-ը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է: Խորհուրդները իշխանության օրգաններ են: ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը: ԽՍՀՄ-ի կառավարությունը ընկեր Մոլոտովի գլխավորությամբ: Բանվոր դասակարգի դիկտատուրան (պետական ղեկավարությունը) ԽՍՀՄ-ում: Բանվոր դասակարգը խորհրդային հասարակության առաջավոր դասակարգն է: Համ Կ(բ)Կ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների առաջավոր ջոկատը՝ կոմունիզմի համար մղվող պայքարի ղեկավարն է:

ԽՍՀՄ-ը մեր սոցիալիստական հայրենիքը, համայն աշխարհի աշխատավորության հայրենիքն է: Խորհրդային քաղաքացիների հայրենասիրությունը: ԽՍՀՄ-ի կապիտալիստական շրջապատումը: Կարմիր բանակն ընկեր Վորոշիլովի գլխավորությամբ կանգնած է Խորհրդային Յերկրի պահակ: Հայրենիքի պաշտպանությունը աշխատավորության սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը ամենազզվելի հանցագործությունն է: Պայքար ժողովրդի թշնամիների՝ տրոցկիստական—բուխարինյան բանդիտների, արտասահմանյան հետախուզության գործակալների դեմ: Ներքգործժողկոմատը— սոցիալիստական հեղափոխության հավատարիմ պահակ: Խորհրդային ժողովրդի բարոյական ու քաղաքական միասնությունը: Ստալինը ԽՍՀՄ-ի ժողովուրդների առաջնորդ, համայն աշխարհի աշխատավորների առաջնորդ:

**Գրականություն**։ «Մեր հայրենիքը»: Գլուխ VIII:

# II. ՔԻՄԻԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ—20 ԺԱՄ

## ԹԵՄԱ 1-ԻՆ

### Տան ՀՕՊ-ի կազմակերպումը—2 ժամ

**Նպատակը**: Ողակին ծանոթացնել տվյալ տան հակաօդային պաշտպանության կազմակերպման հետ և մանավանդ այդ տան հակաքիմիական պաշտպանության հետ և քիմիական ողակի պարտականությունները տան հակաքիմիական պաշտպանության ժամանակ:

**Բովանդակությունը**։ Տան հակաօդային պաշտպանության պլանը։ Տան բնակչության հակաքիմիական պաշտպանությունը։ Ինքնապաշտպանության խմբի քիմիական ողակի խնդիրները։ Ինքնապաշտպանության խմբի մարտիկների և առանձնապես քիմիական ողակի մարտիկների ընդհանուր պարտականությունները։

**Մեթոդական ցուցումներ**։ Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը։ Տվյալ տանը նա ողակին ծանոթացնում է տան ՀՕՔՊ-ի պլանի հետ տերիտորիայում, էքսկուրսիա կատարելու միջոցով։ Այդ միջոցին նա ցույց է տալիս կարգ. պահպանելու, հրշեջ, կապի, դիտողության ու սանիտարական և այլ պոստերի տեղերը, այդ տեղերը շրջագայելով նախօրոք կազմված մարշրուտի համաձայն։ Նույն տեղում նա ծանոթացնում է պոստի կանգնող զբաղվող անձերի պարտականությունների հետ՝ այս կամ այն տեսակ հարձակումների ժամանակ (հրդեհից, ֆուգասային, քիմիական ռումբերի դիպչելը, հատուկ գործիքներից ԹՆ ցող տալը), առանձնապես շեշտելով նրանց պարտականությունները քիմիական հարձակման ժամանակ։ Ապաստարանի տեղը ցույց տալու ժամանակ պետք է ողակին ծանոթացնել ապաստարանի հակաքիմիական սարքավորման և այդ սարքավորումից օգտվելու կարգի հետ։ Բացի այդ, ողակի հրամանատարը ծանոթացնում է սահմանված հետևյալ ազդանշանների հետ՝ «Օդային տագնապ», «Քիմիական տագնապ» և «Ավարտ»։ Ցույց է տալիս ազդանշանային գործիքներն ու միջոցները, ցուցադրելով դրանց գործողությունը։ Մանրամասն ծանոթացնում է քիմիական ողակի հավաքակայանի, քիմիական գույքի պահեստի, գույքի օգտագործման և պահպանման կարգի հետ։

Այնուհետև ցույց է տալիս (եթե կա) լվացման ու գազահանման կայանների տեղերը, նրանց դերը և գործադրման հիմնական կանոնները։

Ծանոթացնելով տան ՀՕՔՊ-ի կազմակերպման հետ, ողակի հրամանատարը պատմում է քիմիական ողակի դերի ու խնդիրների մասին և այն պատասխանատվության մասին, որ դրվում է մարտիկների վրա, տան ու նրա բնակչության հակաքիմիական պաշտպանությունն ապահովելու գործում։

**Ձեռնարկներ**. 1. Իր տան ՀՕՊ-ի պլանը։ 2. «Ինքնապաշտպանության խումբ» 3 «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»։



## ԹԵՄԱ 2-ՐԴ

### Մաշկի պաշտպանության անհատական միջոցները—2 ժամ

Նպատակը։ *Սովորեցնել օգտվելու մաշկի պաշտպանության անհատական միջոցներից և գործնական ունակություններ պատվաստել այդ միջոցները զննելու, անսարքությունները վերացնելու և պահպանելու ասպարեզում։*

Բովանդակությունը։ Պաշտպանական հագուստի ուսումնասիրությունը։ Պաշտպանական հագուստը հագնելու և հանելու կանոնների ու ձևերի ուսումնասիրությունը։ Պաշտպանական հագուստի արտաքին զննությունը և պահպանումը։

Մեթոդական ցուցումներ։ Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը։ Պաշտպանության անհատական միջոցները պետք է համապատասխանեն ողակում եղած անձերի քանակին։ Պարապմունքները կատարվում են բակում կամ շենքում, ձևերը ցույց տալու և այդ ձևերը սովորողների կողմից կատարելու միջոցով։ Ողակի հրամանատարը ձգտում է, որ բոլոր կանոններն ու ձևերը ճիշտ յուրացվեն, չպահանջելով արագություն։ Ձևերի ճիշտ կատարման և արագության տեխնիկան, ինչպես և պահպանման, զննության և այլնի բոլոր կանոնները ճշգրիտ գիտենալը ձեռք են բերվում ողակի հետագա գործնական պարապմունքների միջոցով։

**Ձեռնարկ**։ «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»։

## ԹԵՄԱ 3-ՐԴ

### Գազահանման գործիքներ (ՎԳՊ—I, մաղ-պատգարակ) և հիմնական գազահանող նյութեր—2 ժամ

Նպատակը։ *Սովորեցնել աշխատելու ՎԳՊ-I-ով, մաղ-պատգարակով և գազահանող նյութերով։*

Բովանդակությունը։ Գազահանող նյութեր (քլորակիր, հիպոքլորիտ, կալցիում, ծծմբային նատրիում)։

ՎԳՊ-I, մաղ-պատգարակ գործիքները, նրանց դերը, կառուցվածքը, այս գործիքները սպասարկելը, գործիքները քանդելը և հավաքելը։

ՎԳՊ-I, մաղ-պատգարակ գործիքներով աշխատելը։ Գործիքների երթային դրությունը։ Գործիքները մարտական աշխատանքի համար համրանքի (համարների) պարտականությունները պատրաստելը և նրա աշխատանքը գազահանման ժամանակ և

գազահանումից հետո: Գործիքներն ու գազահանող նյութերի խնամքը, պահպանումը:

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքը անց է կացնում բակի մեջ գործիքներով: Նախքան գործիքներով աշխատանքի անցնելը, պետք է վոր ողակը ծանոթանա գործիքների ու նրանց դերի հետ: Գործիքների մասերի յուրացումը պետք է կատարվի գործիքները քանդելու և հավաքելու հետ զուգընթաց: Դրանից հետո պետք է սկսել գործիքներով աշխատելը: Գազահանող նյութերի մասին անցնում են գործիքները գործողության պատրաստելու հետ զուգընթաց: Գործիքներով աշխատող անձերի քանակը պետք է համապատասխանի գործիքները սպասարկող համրանքին: Մարտիկներից յուրաքանչյուրը պետք է աշխատի գազահանման անիվավոր գործիքով և մաղ-պատգարակով աշխատել, կատարելով համրանքի, զանազան համարների պարտականությունները: Յեթե ինքնապաշտպանության խումբն ունի քլորակիր կամ հիպոքլորիտ կալցիում, ապա դրանք պետք է օգտագործել պարապմունքների համար: Իսկ յեթե այդպիսի նյութեր չկան, պետք է օգտվել ավազից կամ փայտի թեփից: Ողակը պետք է գազահանման նյութերը անսխալ ճանաչի նրանց արտաքին տեսքից և հոտից ու վոչ թե տուփերի վրայի պիտակներով: Պարապմունքի վերջում գործիքները պետք է կարգի բերվեն. միաժամանակ անցնում են գազահանման և գազահանող նյութերի պահպանման ու խնայողության կանոնները: Գործիքներով ամբողջ աշխատանքը պետք է կատարել պաշտպանական հագուստի մեջ, բայց «պատրաստ» դրությամբ հակագազով: Այդ կատարվում է տվյալ թեման հեշտացնելու և լավագույն ձևով յուրացնելու նպատակով: Հակագազերը պետք է հանձնել պարապմունքը վերջացնելուց միայն 10–15 րոպե առաջ:*

**Ձեռնարկ:** *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը» Պաշտավիաքիմի ԿԽ-ի հրատ:*

## ԹԵՄԱ 4-ՐԴ

**Գազահանման գործիքներ (ՌԴՊ-1, լուծիչներ, վառելանյութեր յեվ մեկուսիչ նյութեր) - 3 ժամ**

Նպատակը: *Սովորեցնել աշխատելու ՌԴՊ-1-ով, լուծիչներով ու առձեռն միջոցներով:*



Բովանդակությունը: *Լուծիչներ (կերոսին, սպիրտ), վառելանյութեր, մեկուսիչ նյութեր (հող, մոխիր, ավազ, առձեռն նյութերից փռվածքներ): Դրանց հատկությունը, դերը, գործադրման միջոցները և ծախսման նորմաները: ՌԴՊ-1 գործիքը. նրա դերը, կառուցվածքը, գործիքը սպասարկելը, գործիքի քանդելն ու հավաքելը: ՌԴՊ-1 գործիքներով աշխատելը: Գործիքի յերթային դրությունը: Գործիքները գործողության համար նախապատրաստելը: Համրանքի (համարների) պարտականությունը և նրա աշխատանքը գազահանման ժամանակ և գազահանումից հետո: Գործիքի և լուծիչների պահպանումը: Կըրակային գազահանման ձևերը: Գազահանում յեռման ջրով և գոլորշիով: Առձեռն միջոցներ՝ ջրցաններն ու ցողիչները այլն:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքն անց է կացնում բակում կամ այլ հարմար տեղում: Նախքան գործիքներով աշխատանքի անցնելը, անհրաժեշտ է, վորպեսզի ողակի մարտիկները յուրացնեն գործիքի մասերի դերը և նրանց փոխազդեցությունը աշխատանքի ժամանակ: Այդ պետք է կատարել գործիքը քանդելու հետ զուգընթաց: Լուծիչները ուսումնասիրվում են գործիքները գործողության նախապատրաստելու հետ զուգընթաց: Դրանից հետո սկսում են աշխատել գործիքով: ՌԴՊ-1-ով պետք է աշխատի ողակի յուրաքանչյուր մարտիկ: Լուծիչներ չլինելու դեպքում ՌԴՊ-1-ով աշխատելիս պետք է օգտագործել ներկված ջուր: Ողակի մարտիկները պետք է լուծիչները անսխալ վորոշեն նրանց արտաքին տեսքով և կարողանան օգտագործել դրանք: Պարապմունքից հետո գործիքները կարգի յեն բերվում: Միաժամանակ պետք է ուսումնասիրել ՌԴՊ-1 և լուծիչները պահպանելու և խնամելու կարգը: Այնուհետև ողակի հրամանատարը ծանոթացնում է ձագարների անցքերի և սարքավորման կրակային գազահանման ձևերի հետ: Դրանից հետո ողակի հրամանատարը սովորեցնում է գործնականորեն՝ հողի, մոխրի, ավազի և այլ մեկուսիչ նյութերի օգտագործումը վորպես փռվածք կամուրջներ, անցարաններ սարքելու և այլն: Գործիքներով աշխատանքը պետք է կատարել պաշտպանական հագուստները հագած, սկզբում առանց հակագազերը հագնելու, այդ հակագազերը հագնում են պարապմունքը ավարտելուց միայն 20–30 րոպե առաջ:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 3-րդ թեմայի վերաբերյալ:*

# ԹԵՄԱ 5-ՐԴ

**ԹՆ վարող գործիքներ և ամենահասարակ օդերևութաբանական գործիքներ 1 ժամ**

Նպատակը: *Ողակի կազմին սովորեցնել օգտվելու ԹՆ վարող գործիքներից և քամու ուղղությունն ու արագությունը վորոշելու համար ամենահասարակ օդերևութաբանական գործիքներից:*

Բովանդակությունը: *Կարողանալ ճանաչել ԹՆ հոտից, արտաքին տեսքից և հատկանիշներից: Գ—4 գաղորոշիչների կառուցվածքը, դերը և օգտագործելու կանոնը: Աշխատանք գաղորոշիչներով: Քամաչափի* (ветромер) *կառուցվածքը և աշխատանք նրանով:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը ծանոթացնում է մարտիկներին ԹՆ-երի բնորոշ ներկայացուցիչների (իպրիտի, ֆոսգենի, ադամսիտի, քլորացետոֆենոնի, լյուիզիտի, քլորպիկրինի և այլն) արտաքին տեսքի ու նրանց հոտի հետ, ԹՆ-երի իմիտացիա պարունակող գործիքի միջոցով: Այնուհետև ծանոթացնում է Գ-4 գաղորոշիչի (կամ յեղած այլ գաղորոշիչների) կառուցվածքի և այն օգտագործելու կանոնների հետ (ցույց է տալիս գործնականորեն): Դրանից հետո ողակի մարտիկներին տալիս է 30 րոպե ժամանակ գաղորոշիչով գործնական աշխատանք կատարելու համար: Ապա ցույց է տալիս հողմաչափ և սովորեցնում է քամու ուղղությունը և արագությունը վորոշելու յեղանակները բակում (փողոցում): Պարապմունքը կատարվում է պաշտպանական հագուստով, իսկ 30 րոպե հակագազերը հագած:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 2-րդ թեմայի վերաբերյալ:*

# ԹԵՄԱ 6-ՐԴ

**ԹՆ-ով վարակված տեղամասի հետախուզությունը և նրա սահմանների վորոշումը 2 ժամ**

Նպատակը: *Մշակել հետախուզության և ԹՆ-երով վարակված տեղամասի սահմանները և վարակման յեղանակները վորոշելու գործնական ունակություններ:*

Բովանդակությունը: *Վարակման վայրին մոտենալը: ԹՆ-երով վարակված տեղամասի սահմանները վորոշելը և ցանկապատելը: Քամու ուղղությունն ու ԹՆ-երի գոլորշիների տարածման գոտին վորոշելը: Շրջանցման տեղի վորոշելը: Վարակման յեղանակները վորոշելը (ռումբի նետելը, ԹՆ շաղ տալը): ԹՆ-երը հոտով և գաղորոշիչով վորոշելը: Իրադեկում կամ զեկուցում:*

Մեթոդական ցուցումներ: *5-րդ թեմայի յուրացումից հետո, ողակի հրամանատարը ողակը տանում է նախորոք նշանակված վայրը (ՎՏ—վարակված տեղամաս) հետախուզություն կատարելու համար: Մշակել վարակված տեղամասին մոտենալը—քամին հաշվի առնելով, հետախուզության տեխնիկան, ՎՏ սահմանները վորոշելու յեղանակը, ԹՆ-երը և ԹՆ-երի գործադրման յեղանակը վորոշելը և այլն: Քիմիական հետախուզության տեխնիկան պետք է խնամքով մշակել այն հաշվով, վոր սովորողները կարողանան վարակված տեղամասի հետախուզություն կատարել տան բակում, փողոցում և տան մեջ: Դրա համար հետախուզության աշխատանքը կատարելիս, պետք է պահանջել վոչ թե արագություն, այլ ձևերի ուղիղ և ճշգրիտ կատարումը, պահպանելով նախազգուշացման բոլոր միջոցները: Հետախուզության աշխատանքը կատարվում է պաշտպանական հագուստով, հակագազերը հագած: Ողակի հրամանատարի բացատրության ժամանակ հակագազերը հանում են: Պաշտպանական հագուստի մեջ մնալու ընդհանուր տևողությունը մեկ ժամից չպետք է գերազանցի:*

*Ողում ԹՆ շաղ տալու ժամանակ վարակված տեղամասը պետք է ցույց տալ վարժական ԹՆ-ով խոնավված, գունավոր (դեղին) թեփով, կամ ավելի լավ է ԹՆ-ի իմիտացիա շաղ տալով: Անկայուն ԹՆ պարունակող քիմիական ռումբի պայթյունը ցույց է տրվում փոքր պայթուցիկ ծրար պայթեցնելով, վորը տալիս է կանաչ փոշու մի փոքրիկ ամպ: Կայուն ԹՆ պարունակող քիմիական ռումբի պայթյունը ցույց է տրվում դեղին փոշու ամպ առաջացնող պայթուցիկ ծրարով: Պայմանական փոսը (ավելի լավ է նախորոք փորել այն) ցույց տալ պայմանական նշանով (ձողի վրա դեղին դրոշակ), իսկ բուն վարակումը՝ վարժական ԹՆ, շաղ տալով (ցփնելով) նավթ կամ դեղին գույնով ներկված թեփ: Պայթուցիկ ծրարներ գործադրելիս պետք է պահպանել նախազգուշության անհրաժեշտ միջոցներ:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 2-րդ թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 7-ՐԴ

**Քիմիական ողակի գործողությունը սպառնալից դրությունում հայտարարելիս և «Օդային տագնապ» ազդանշանի ժամանակ —2 ժամ**

Նպատակը: *Նախապատրաստական միջոցառումներ անցկացնելու ունակությունների պատվաստումը:*

Բովանդակությունը: *Ողակի հավաք: Նյութական մասը մարտական աշխատանքի համար նախապատրաստելը: Մարտական անձի ծավալումը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը հայտարարում է մարտիկներին, որ մտցված է «Սպառնալից դրություն» և ապա ողակի մարտիկներին հրաման է տալիս ստուգել նյութական մասը: Նյութական մասի ստուգումը և նախապատրաստումը պետք է կատարվի արագ, բայց խնամքով: Դրանից հետո ողակը ցրվում է, իսկ ողակի հրամանատարը մեկ մարտիկ թողնում է և նրան 10–15 րոպե հետո ուղարկում է մյուս մարտիկների բնակարանները, որպեսզի հայտարարի «Օդային տագնապի» ազդանշանի մասին (պայմանականորեն համարելով, որ նա տրված է): Ողակի հրամանատարը, այդ դեպքում, պետք է ձգտի ողակը արագ հավաքելուն և նյութական մասը մարտական աշխատանքի նախապատրաստելուն, գործիքները լցնելուն: Մարտիկները հագնում են պաշտպանական հագուստներ, իսկ հակագազերը փոխադրում են «պատրաստ» դրության: Յուրաքանչյուր մարտիկից ողակի հրամանատարը զեկուցում է պահանջում պատրաստ լինելու մասին: Սրանով տվյալ պարապմունքը ավարտվում է:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 8-ՐԴ

**Քիմիական ողակի գործողությունները ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի 2 ժամ**

Նպատակը: *Վողջ ողակին աշխատանքի ունակություններ պատվաստելը: ԹՆ վարակված տեղամասի հետախուզության հարցերի մշակումը:*

Բովանդակությունը: *Ողակի աշխատանքն ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի: ԹՆ վարակված տեղամասերի հետախուզությունը:*



Մեթոդական ցուցումներ: *Այս պարապմունքը հանդիսանում է նախորդ պարապմունքների (այսինքն 7-րդ թեմայի) շարունակությունը: Մարտիկները պարապմունքի սկզբում պետք է բերվեն այն դրության մեջ, որի մեջ նրանք գտնվել են 7-րդ թեմայի պարապմունքի վերջում: Ողակի հրամանատարը տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը, որից հետո քիմիական ողակին նա խնդիր է տալիս՝ հետախուզելու ԹՆ-ով վարակված վայրերը: Այս վարակումը պետք է զանազանակերպել 2–3 տեղ իմիտացիա կատարելու միջոցով, զանազան տեսակի քիմիական հարձակումները հետախուզելու ասպարեզում ողակը մարզելու նպատակով (քիմիական ռումբի պայթյուն, օդանավերից ԿԹՆ (կայուն թունավոր նյութեր) շաղ տալը): Պարապմունքի ընթացքում ողակի հրամանատարը, նայած թե ինչ հարց ողակը վատ է յուրացրել, կրկնել է տալիս այն: Ողակի հրամանատարը պետք է ձգտի արագ և ժամանակին կատարել հետախուզության համար առաջադրված խնդիրները, այն է՝ պարզել վարակման սահմաններն ու յեղանակները, որոշել քամու ուղղությունը, ԹՆ-երի կուտակումը, ցանկապատել վարակված վայրը, ցանկապատման նշաններով, որոշել ԹՆ-երը, ընտրել գազահանում սկսելու տեղը, գազահանման նյութերը մոտ բերելու ուղիները:*

*Վարակված վայրերը պետք է նշանակել այնպես, ինչպես մատնանշված է 6-րդ թեմայի մեթոդական ցուցումներում:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ*

## ԹԵՄԱ 9-ՐԴ

**Քիմիական ողակի գործողությունները օդային քիմիական հարձակումների հետևանքները լիկվիդացիայի ենթարկելու ասպարեզում—2 ժամ**

Նպատակը: *Սպասարկող համրանքների կազմով սովորեցնել ողակին աշխատել գազահանման գործիքներով:*

Բովանդակությունը: *Վարակված տեղամասը մեկնելը: Վարակված տեղամասերն առաջին և հաջորդ հերթերի տեղամասերի բաժանելը: Համրանքներին խնդիրներ տալը: Գազահանում շենքի ներսում և բակի գազահանում: Գազահանման ավարտումը: Գործիքների նախնական գազահանումը: Գազահանումից հետո համրանքների հավաքելու տեղը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անցկացնելիս, ո-*

ղակի հրամանատարը այնպես պետք է դասավորի և նշանակի տեղամասերը, որպեսզի հնարավոր լինի որքան կարելի է լրիվ և նպատակահարմար կերպով գործադրել գաղահանման բոլոր կեղանակներն ու միջոցները (ՎԴՊ–1, ՌԴՊ–1, մաղ–պատղաբակ)։

Վարակված տեղամասերը ցույց է տրվում այնպես, ինչպես մատնանշված է նախորդ թեմաների մեթոդական ցուցումներում։ Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վարակված տեղամասը մեկնելու կարգի վրա։ Վարակված տեղամասը ժամանելուն պես ողակի հրամանատարը համրանքներին խնդիրներ է առաջադրում և ձգտում է, որպեսզի այդ խնդիրները կրկնողության միջոցով յուրացնեն։ Գաղահանման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կատարման ճշտության վրա (օրինակ, որպեսզի բաց թողնված տեղերը չլինեն)։ Այնուհետև պետք է ցույց տալ, թե ինչպես է կատարվում գաղահանումը շենքի ներսում (սանդղավանդակների, միջանցքի և այլնի գաղահանում)։ Գաղահանումն ավարտելուց հետո կատարում են գործիքների նախնական գաղահանում։

Ծանոթ. Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ։

## ԹԵՄԱ 10–ՐԴ

### Քիմիական ողակի գործողությունները ռադիոակտիվ հարձակման հետեվանքների լիկվիդացիայից հետո. 2 ժամ

Նպատակը։ *Սովորեցնել ողակի մարտիկներին գաղահանելու գործիքները, վարակված պաշտպանական հագուստը հանելու ժամանակ ձեռք առնել նախազգուշական միջոցներ և յուրացնելու լոդակայանում սանիտարական–քիմիական մշակման կանոնները։*

Բովանդակությունը։ *Վարակված տեղամասում աշխատելուց հետո, վարակված պաշտպանական հագուստը հանելու կարգը և այս դեպքում ձեռք առնվող նախազգուշական միջոցները։ Վարակված հագուստի դասավորումը։ Լոդակայան մեկնելու կարգը (բաղնիք, դուշ, լվացման կայանների համար հարմարեցված վաննայի սենյակներ)։ Կարգ ու կանոնը և սանիտարական մշակումը լոդակայանում։*

Մեթոդական ցուցումներ։ *Ողակի հրամանատարն անց է կացնում գործիքները լրիվ գաղահանելու պարապմունք։ Գործիքների գաղահանումն ավարտելուց և ողակի՝ գաղահանումն անցկացրած մարտիկներին դիտելուց հետո, նա ողակի հետ մեկնում է լոդակայան։ Այդ դեպքում ողակը լոդակայան պետք է գնա անցնելով քշորակրով (պայմանականորեն ավարով) խիտ ծածկված հատուկ ճանապարհով, որպեսզի մարտիկներն իրենց անցած ճանապարհին հետքեր չթողնեն և առանձին տեղեր չվարակեն։*

*Լոդակայանում հատուկ ցույց տրված տեղում, մարտիկը առանց ձեռնոցները հանելու, ինքնուրույն կերպով պետք է հանի կոշիկները և հակագազը, արձակի կոմբինեզոնի կրծքի վրայի կապիչները։ Դրանից հետո նա հանում է ձեռնոցները և աչ զգուշությամբ, որպեսզի իրեն չվարակի՝ պաշտպանական հագուստը։ Ապա անցնում է դուշի, վաննայի սենյակը կամ բաղնիքը (նայած, թե որ՞ն է հարմարեցված լոդակայանի համար)։ Նախքան դուշի տակ կանգնելը, նա իր մարմինը լավ ոճառում է, առանձնապես շատ քրտնող տեղերը։ Լողանալուց հետո, մարտիկը գնում է մյուս սենյակը, որտեղ հագնում է մաքուր սպիտակեղեն և իր հագուստը։ Այն պաշտպանական հագուստը, հատակեղեն և սպիտակեղենը, որոնցով մարտիկները գաղահանման աշխատանք են կատարել, լոդակայանի սպասարկող անձնակազմը հավաքում է ռեզինով պատած տոպրակի մեջ և ուղարկում է գաղահանելու։ Ողակի կազմում կանայք և տղամարդիկ լինելու դեպքում լոդակայանն անցնում են յերկու հերթով։*

*Լողանալու և լոդակայանի վերը շարադրված բոլոր կարգ ու կանոնը պետք է գործնականորեն անցնել յուրաքանչյուր մարտիկի հետ։*

Ծանոթ. Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ։

# III. ՀՐՇԵՋ ՈՂԱԿԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ – 20 ԺԱՄ

## ԹԵՄԱ 1–ԻՆ

### Տան ՀՕՊ-ի կազմակերպումը – 2 ժամ

Նպատակը։ *Ողակին ծանոթացնել տվյալ տան հակաօդային պաշտպանության կազմակերպման հետ և առանձնապես տան հակահրդեհային պաշտպանության և այս պաշտպանության ժամանակ հրշեջ ողակի պարտականությունների հետ։*

Բովանդակությունը։ *Տան հակաօդային պաշտպանության պլանը։ Տան բնակչության հակահրդեհային պաշտպանությունը։ Հրշեջ ողակի անելիքները։ Ինքնապաշտպանության խմբակի մար–*

տեկների ընդհանուր պարտականությունները և առանձնապես հրշեջ ողակի մարտիկների պարտականությունները:

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը: Տվյալ տան ՀՕՊ-ի պլանի հետ նա ողակին ծանոթացնում է, տան տերիտորիայում կատարվող էքսկուրսիայի ժամանակ ցույց տալով՝ կապի, դիտող, կարգ պահպանելու, քիմիական, սանիտարական և այլ պոստերի տեղերը: Պոստերը շրջայցը կատարվում է նախորոք կազմված մարշրուտով: Ողակի հրամանատարը հենց այստեղ էլ ծանոթացնում է պոստերում գտնվող անձերի պարտականությունների հետ՝ հարձակման այս կամ այն յեղանակի դեպքում (հրդեհիչ, ֆուգասային, քիմիական ռումբեր ընկնելու, ինչպես և գործիքներից ԹՆ չաղ տալու ժամանակ), ընդսմին ընդգրկելով հրշեջ ողակի նշանակությունն ու պարտականությունները: Ապաստարանի տեղը ցույց տալու դեպքում, անհրաժեշտ է ծանոթացնել նրա սարքավորման ու օգտագործման կանոնների հետ: Պետք է նաև ծանոթացնել սահմանված հետևյալ ազդանշանների հետ՝ «Օդային տագնապ», «Քիմիական տագնապ», «Հրդեհային տագնապ» և «Ավարտ»:*

*Ցույց տալով ազդանշանների գործիքներն ու միջոցները, ողակի հրամանատարը ցուցադրում է դրանց գործողությունը: Մանրամասն ծանոթացնում է հրշեջ պոստերի տեղերի հետ, հրշեջ ողակի ռեզերվի հավաքատեղի և հակահրդեհային նյութերի տեղի պահպանման կարգի հետ: Ծանոթացնելով տան ՀՕՊ-ի կազմակերպման հետ, ողակի հրամանատարը պատմում է հրշեջ ողակի դերի ու անելիքների մասին և այն պատասխանատվության մասին, վոր դրվում է տան հակահրդեհային պաշտպանությանը մասնակցող մարտիկների վրա:*

**Ձեռնարկ:** *1 Իր տան ՀՕՊ ի պլանը 2. «Ինքնապաշտպանության խմբակը» 3. «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:*

## ԹԵՄԱ 2-ՐԴ

### Հրդեհ հանգցնելու միջոցներն ու յեղանակները—3 ժամ

Նպատակը: *Ուսումնասիրել հրշեջ գույքն ու հրդեհ հանգցնելու քիմիական միջոցները և սովորեցնել դրանց գործածելը:*

Բովանդակությունը: *Հրդեհ հանգցնելիս գործածվող հրշեջ գույքը (կացին, լինգեր, կռաձողեր, յեղաններ, բահեր),*



*և նրանց օգտագործումը: Հեղուկափրփուր հրամարիչի կառուցվածքը, նրա հատկությունը, լցնելը և նրանով աշխատելը: Փոշիաշիթ հրամարիչի կառուցվածքը, նրա հատկությունն ու նրանով աշխատելու կանոնները:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը պետք է անցկացնել, գործնականորեն ցույց տալով և ուսումնասիրելով հրշեջ գույքը (այդ գույքը աշխատանքի պատրաստելը և օգտագործման յեղանակները): Մարտիկները պետք է գիտենան վոչ միայն գույքի անունը և դերը, այլ նաև պետք է կարողանան դրանք գործածել: Նախքան հեղուկափրփուր և փոշիաշիթ հրամարիչներով աշխատանքի անցնելը, անհրաժեշտ է, վորպեսզի ողակի մարտիկները լավ յուրացնեն այդ տիպի հրամարիչների կառուցվածքը: Այնուհետև կատարում են 2–3 հրամարիչների լիցք, ուշադրություն դարձնելով, վորպեսզի թթվուտով սրվակը չըկոտրվի: Միաժամանակ պետք է ծանոթացնել հրամարիչների ձմեռային ու ամառային լիցքի և պահպանման միջև յեղած տարբերության հետ: Դրանից հետո կատարվում է հրամարիչներից օգտվելու գործնական մարզանք:*

**Ձեռնարկ:** *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:*

## ԹԵՄԱ 3-ՐԴ

### Հրդեհները ջրով հանգցնելու ձևերն ու միջոցները 3—ժամ

Նպատակը: *Ուսումնասիրել ջրով հանգցնելու միջոցները և սովորեցնել դրանցից օգտվելը:*

Բովանդակությունը: *Գործիքների կառուցվածքը՝ հիդրոպուլտ-դույլ, հիդրոպուլտ-հենացույց, հրշեջ ջրհան* (насос). *Դրանց աշխատանքի պատրաստելը և նրանցով աշխատելու կանոնները: Նախազգուշական միջոցներ: Տան դրսի և ներսի հրշեջ ծորակները (նրանց գտնվելու տեղը և օգտագործելու կարգը): Հրդեհի օջախները հանգցնել օգտագործելով դույլերով ջուր հայթայթելու միջոցը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքը անց է կացնում գործիքներով՝ բակի մեջ: Նախքան գործիքներով աշխատանքի անցնելը, պետք է, վոր ողակը գիտենա գործիքների մասերը և նրանց փոխազդեցությունն աշխատանքի ժամանակ: Գործիքների մասերի և նրանց դերի հետ ծանոթացնելը պետք է կատարվի գործիքները քանդելու և հավաքելու*

հետ զուգընթաց: Դրանից հետո սկսում են աշխատել գործիքներով: Յուրաքանչյուր գործիքով աշխատում է այնքան մարդ, որքան սահմանված է տվյալ գործիքի համար: Ոզակի յուրաքանչյուր մարտիկը պարապմունքի ժամանակ պետք է անպայման աշխատի ուսումնասիրվող բոլոր գործիքներով և սովորի ապահովել գործիքների անխափան աշխատանքը (վերացնել անկանոնությունները): Պարապմունքի վերջում գործիքները կարգի յեն բերվում: Ընդսմին հայտնվում են գործիքները պահպանելու և խնամելու կանոնները: Դրսի և ներսի բոլոր հրշեջ ծորակների հետ ծանոթացնում են այդ ծորակները դրված վայրում, բացատրելով կառուցվածքը, գործողության մեջ դնելով և նորից փակելով: Այնուհետև պետք է ցույց տալ, թե ինչպես է տրվում դույլերով ջուրը «շղթայով»:

**Ծանոթ.** Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 4-ՐԴ

### Տան հակահրդեհային սարքավորումը—2 ժամ

Նպատակը: *Ուսումնասիրել տան մեջ կատարվող հակահրդեհային ձեռնարկումները:*

Բովանդակությունը: *Տան տերիտորիան ապահովել ճակատամուտքերով ու կառանցներով* (проезд) *(դարպասը բանալու հնարավորություն, կառանցի ուղիները չփակելը և սարքին պահելը): Ջերդակի փայտի մասերի այրվելու հնարավորությունը կանխող միջոցառումներ (ցեխով ծեփելը, ավազ լցնելը, խողովակների ճեղքերը ծեփելը): Տան մեջ ու չերդակում հրամարիչներն ու ավազով արկղները դասավորելու կարգը: Նախազգուշական միջոցներ վառելանյութերի պահպանման ժամանակ: Ելեկտրոլարերի պահպանումը: Հակահրդեհային պատի սարքավորումը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անց է կացնում ոզակի հրամանատարը, որը գործնականորեն ծանոթացնում է ոզակին, տան բոլոր ճակատամուտքերի և տան ու բակի տերիտորիայում յեղած կառանցների հետ և այն բանի հետ, թե ինչպես են բացվում բոլոր դարպասները, ընդսմին յուրաքանչյուր մարտիկ պետք է գիտենա, թե որտեղ են պահվում այդ դարպասի բանալիները Նույնը պետք է կատարել դեպի բակը և փողոց տանող ընդհանուր միջանցքների դռների նկատմամբ:*



Այնուհետև ոզակն այցելում է բոլոր չերդակներն ու սանդղավանդակները, ծանոթանում է հրշեջ պոստերի տեղերի հետ և լրացնում է արկղների ու տոպրակների ավազի պաշարը, ուշադրություն դարձնելով, որ ավազը չոր լինի և առանց կոշտերի: Անցնելիս ոզակը պետք է հետևի, որպեսզի միջանցքները, սանդղավանդակներն ու չերդակները ծանրաբեռնված չլինեն իրերով, հեշտությամբ բռնկվող հնոտիներով և, յեթե պետք է, միջոցներ է ձեռք առնում դրանք ազատելու համար:

Այնուհետև ոզակը մանրամասն ծանոթանում է ջրատար խողովակների ու ելեկտրոցանցի հետ: Ուսումնասիրում է դրանց դրությունը, ինչպես և ճշտում է ջրատար խողովակների ընդհանուր ծորակների ու ելեկտրոցանցի ընդհանուր անջատիչների (հատիչների) տեղը:

**Ծանոթ.** Նույնը, ինչ որ 2 րդ թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 5-ՐԴ

### Հրդեհի օջախներ հանգցնելու տեխնիկան 2 ժամ

Նպատակը: *Գործնականորեն սովորեցնել հանգցնել զանազան այրվող նյութերը տարբեր ձևերով ու միջոցներով:*

Բովանդակությունը: *Տան մեջ յեղած հրդեհի օջախները հանգցնելը: Զանազան նյութեր (հրդեհիչ ռումբեր, շենքի մասեր, ելեկտրոլարեր և այրվող նյութեր) հանգցնելու միջոցներն ու յեղանակները:*

Մեթոդական ցուցումներ: *Ոզակի հրամանատարը պարապմունքը անց է կացնում բակում ջրով հանգցնող գործիքներով, հրամարիչներով և ավազով լցված տոպրակներով:*

*Ջրով հանգցնելու համար, նախազգուշական միջոցներ ձեռք առնելով, կարելի յե օգտագործել բակում կրակ տված տախտակի մի քանի հին արկղներ: Հանգցնելիս պետք է ցույց տալ, թե ինչպես պետք է ուղղել ջրի շիթը, հաշվի առնելով ազդեցությունը (ուղղությունն ու արագությունը), ուշադրություն պետք է դարձնել շիթի հզորության և այն բանին, որ ձեռնտու յե, յերբ ջուրը դուրս է գալիս ծագած հրդեհի օջախի հետ միևնույն բարձրության վրա: Հրդեհիչ (տերմիտային) ռումբեր հանգցնելը սովորեցնելու համար պետք է ունենալ ավազով լցված տոպրակներ (քաշ 2-5 կգ.): Յեթե հրդեհի տեսակետից անվտանգ վայր (մեծ բակ) կա, ապա պետք է վառել թիթեղյա*

կավարիչներով, կամ պահածոների տուփերի մեջ նավթով թրջված խծուծ, բամբակ և այլն և ապա այդպիսիները հանգցնել 3–8 մետր հեռավորությունից: Ովքեր յուրացրել են և կարողանում են արագ հանգցնել, այսինքն, այդ հեռավորությունից հրդեհի օջախի վրա ճշտորեն ավազով լի տոպրակներ թափել. Նրանց առաջարկվում է նույն վարժությունը կատարել հակագազերով:

Ելեկտրոլարերը հանգցնելիս բոլորը պետք է գիտենան, որ անհրաժեշտ է վառվող լարը անհապաղ անջատել, այն կտրելու միջոցով, կամ անջատիչի (հատիչի) օգնությամբ: Բացի այդ պետք է ուսումնասիրել զանազան վառելանյութերը հանգցնելու միջոցներն ու յեղանակները:

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 6–ՐԴ

### Փրկումն ու ինքնափրկումը հրդեհի պայմաններում—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել հրդեհի դեպքում ուրիշներին փրկելու և ինքն իրեն փրկելու միջոցները, ձևերն ու յեղանակները:*

Բովանդակությունը: *Տուժածներին փոխադրելը: Փրկիչ բաղկաթոռ պատրաստելը: Տուժածին իջեցնելն ու նրա կողմից ինքն իրեն իջեցնելը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքն անց է կացնում այն շենքի բակում, որը այդ պարապմունքի համար ամենահարմարն է: Տուժածի փոխադրումը պետք է կատարել 50–100 քայլի վրա՝ յերկու հոգով, առանց պատգարակի: Նույնը կատարում են նաև տան սանդուղներով: Փրկիչ բաղկաթոռ պատրաստելու համար պետք է խնամքով ստուգել պարանների սարքին լինելը և ապա ցույց տալ մարտիկներին, թե ինչպես պետք է բաղկաթոռ պատրաստել, ինչպես կատարել այդ բաղկաթոռի վայրեջքը, մարտիկներից պահանջելով, որ այս ամենը կատարեն իրենք, որից հետո կազմակերպել «տուժածի» վայրեջքը 2–րդ հարկից: Նույն կարգով էլ կատարվում է ինքն իրեն իջեցնելու վարժությունը: Մարտիկներին կտուր (չերդակ) բարձրացնելու և իջեցնելու ասպարիզում մարզելու համար անհրաժեշտ է օգտագործել հրշեջ սանդուղները:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 2-րդ թեմայի վերաբերյալ:*



## ԹԵՄԱ 7–ՐԴ

### Ողակի գործողությունը «Ոդային տագնապ» ազդանշանի ժամանակ 2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ողակին՝ գործելու ըստ «Ոդային տագնապ» ազդանշանի:*

Բովանդակությունը: *Ողակի հավաքը: Նյութական մասը աշխատանքի պատրաստելը: Պոստեր նշանակելը և հանգցնելու միջոցների առկայության ստուգումը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը մարտիկներին հայտարարում է, որ հայտարարված է սպառնալից դրություն և ապա անց է կացնում պարապմունքը, որի ժամանակ սովորեցնում է ըստ «Ոդային տագնապ» ազդանշանի գործելը: Դրա համար նա հրաման է տալիս ողակի պահեստի մարտիկներին՝ նյութական մասը ստուգելու և այդ նյութական մասը մարտական աշխատանքի նախապատրաստելու մասին: Ստուգումը պետք է լինի արագ և մանրազնին: Ողակի հրամանատարը յուրաքանչյուր մարտիկից պահանջում է զեկուցում՝ հրամանը կատարելու համար պատրաստ լինելու մասին: Միաժամանակ նա ողակի՝ վաղորոք հրշեջ պոստերը նշանակված մարտիկներին ուղարկում է իրենց պոստերը և նրանց պարտավորեցնում է ստուգել այդ պոստերում սարքավորման դրությունը: Այնուհետև ստուգում է պոստերը և պոստում կանգնած մարտիկներին տալիս է ցուցումներ: Դրանից հետո նա հավաքում է ողակը և ամբողջ ողակի համար կատարում է վերլուծում* (разбор):

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 8–ՐԴ

### Հրշեջ ողակի գործողությունները ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ողակին գործելու քիմիական հարձակման պայմաններում:*

Բովանդակությունը: *Ողակի գործողությունը քիմիական տագնապի պայմաններում:*

Մեթոդական ցուցումներ: *Այս պարապմունքը հանդիսանում է 7–րդ թեմայի շարունակությունը: Պարապմունքի սկզբին մարտիկները պետք է լինեն նույն դրության մեջ, ինչ դրության մեջ նրանք գտնվել են 7–րդ թեմայի վերաբերյալ պարապմուն-*

քի վերջում: Ողակի հրամանատարը տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը: Դրանից հետո սարքում է հրդեհի մեկ-երկու կեղծ ոջախներ: Այս պայմաններում ողակը աշխատանքը պետք է կատարի հակագազերը հագած: Բացի այդ, ողակին պետք է սովորեցնել հրդեհ հանգցնելը բակի տերիտորիան ԹՆ-ով վարակվելու պայմաններում, օգտագործելով մաշկի պաշտպանման միջոցները:

**Ձեռնարկ:** Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:

### ԹԵՄԱ 9-ՐԴ

**Ողակի գործողությունները հարվածման համակցված ոջախում—2 ժամ**

Նպատակը: *Սովորեցնել ողակին՝ հարվածման համակցված ոջախի պայմաններում հրդեհ հանգցնելը:*

Բովանդակությունը: *Հանգցնող բոլոր միջոցներով աշխատելը, մարդկանց և գույքը փրկելը, եվակուացիան:*

Մեթոդական ցուցումներ: *Այս պարապմունքը հանդիսանում է 7 և 8-րդ թեմաների շարունակությունը: Ուստի պարապմունքը անց է կացվում հաշվի առնելով ձեռք բերած գիտելիքները: Տվյալ պարապմունքի ժամանակ ողակի հրամանատարը գործադրում է իմիտացիոն միջոցներ այն հաշվով, որպեսզի որքան կարելի յե լրիվ ու նպատակահարմար կերպով գործադրվեն տան մեջ գտնվող հանգցնելու բոլոր յեղանակներն ու միջոցները: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ողակի կարգապահության, պատրաստվելու և խնդրի կատարման արագության վրա: Պետք է ստեղծել ավելի բարդ իրադրություն, քան նախորդ պարապմունքների ժամանակ: Օրինակ՝ տան չերդակում հրդեհիչ ռումբերից բռնկվել է հրդեհի 2–3 ոջախ: Քիմիական տագնապի պայմաններում պոստը հրդեհը չի կարողացել հաղթահարել: Կանչված ռեզերվը տան ներսի սանդուղքով ներս մտնել չի կարողանում, որովհետև մաշկի պաշտպանման միջոցներ չունի, իսկ այդ չերդակը հասնելու համար պետք է անցնի կայուն ԹՆ-երով (քիմիական ռումբի պայթյուն), վարակված բակի միջով, որովհետև ռեզերվը գտնվում է տան մյուս կողմի (օրինակ, փողոց տանող) սանդղավանդակում: Ռեզերվի համար միակ ուղին է դրսի հրդեհաշեջային սանդուղքներով բարձրանալը: Կարելի յե վերցնել մի այլ վարիանտ, որը կապված է ջրմուղը քանդվելու հետ, և այլն: Նույն պարապմունքի ժամանակ ողակին պետք է ծանոթացնել իրերը այն բնակարաններից հանելու կար-*



*գի հետ, որոնց սպառնում է հրդեհի վտանգը, ինչպես և բնակիչներին բնակարաններից հանելու կարգի հետ: Պարապմունքի վերջում պետք է ցույց տալ նյութական մասի պահպանումը, այն կարգի բերելը և կատարել վերլուծություն:*

## IV. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ—20 ԺԱՄ

### ԹԵՄԱ 1-ԻՆ

**Տան ՀՈՊ-ի կազմակերպումը—2 ժամ**

Նպատակը: *Ծանոթացնել ողակին տվյալ տան հակաոդային պաշտպանության կազմակերպման հետ և մանավանդ տան սանիտարական ապահովման և սանիտարական ողակի պարտականությունների հետ:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը: Տան ՀՈՊ-ի պլանի հետ նա ողակին ծանոթացնում է տան տերիտորիայում եքսկուրսիա կազմակերպելով: Այս դեպքում նա ցույց է տալիս կարգ. պահպանելու, հրշեջ, կապի, դիտողության, քիմիական և այլ պոստերի տեղերը, այդ պոստերը շրջագայելով ըստ նախորոք կազմված մարշրուտի: Հենց այստեղ նա ծանոթացնում է այս կամ այն ձևի հարձակման ժամանակ (ֆուգասային, քիմիական, հրդեհիչ ռումբեր ընկնելիս, ինչպես և հատուկ գործիքներով ԹՆ թափելիս) պոստեր դրավող անձերի պարտականությունների հետ: Լոգակայանը և գազապատսպարանը ցույց տալու ժամանակ պետք է ծանոթացնել լոգակայանում լողանալու կարգի և ապաստարանի բժշկասանիտարական սարքավորման հետ: Ծանոթացնում է սահմանված հետևյալ ազդանշանների հետ՝ «Ոդային տագնապ», «Քիմիական տագնապ», «Հրդեհային տագնապ» և «Ավարտ»: Ցույց է տալիս ազդանշանի գործիքներն ու միջոցները գործողության մեջ: Մանրակրկիտ կանգ է առնում պոստերի և սանիտարական ողակի հավաքակայանի տեղերում: Ծանոթացնելով տան ՀՈՊ-ի կազմակերպման հետ, ողակի հրամանատարը պատմում է տան ՀՈՊ-ի սանիտարական ողակի դերի ու խնդիրների մասին և այն պատասխանատվության մասին, որը ընկնում է ողակի մարտիկների վրա:*

**Ձեռնարկներ:** 1 «Տվյալ տան ՀՈՊ-ի պլանը»: 2. «Ինքնապաշտպանության խումբը» 3. «Բնակելի տան հակաոդային պաշտպանությունը»:

# ԹԵՄԱ 2–ՐԴ

## Սանիտարական պայուսակի սարք ու կարգը—2 ժամ

Նպատակը: *Ծանոթացնել սանիտարական պայուսակի բովանդակության հետ և սովորեցնել օգնություն ցույց տալու ժամանակ դեղորայքն ու վիրակապական նյութերը ճիշտ գործածելը, ինչպես և սովորեցնել պատգարակից օգտվելը:*

Բովանդակությունը: *Սանիտարական պայուսակը և նրա պարունակությունը, պատգարակի կառուցվածքը, թթվածնային բարձի կառուցվածքը:*

Մեթոդական ցուցումներ: *Այս թեման անց է կացվում երկու պարապմունքի ընթացքում: Առաջին պարապմունքը՝ պայուսակի պարունակությունը և նրա օգտագործումը, երկրորդ պարապմունքը՝ պատգարակի և թթվածնային բարձի կառուցվածքը և նրանց օգտագործումը: Ողակի հրամանատարը պարապմունքն անց է կացնում շենքի մեջ, ունենալով սանիտարական պայուսակ և թթվածնային բարձ: Նա բացատրում է պայուսակի կառուցվածքը և նրա դերը, պատմում և ցույց է տալիս պայուսակի պարունակությունը, կանգ առնելով յուրաքանչյուր դեղի վրա առանձին-առանձին, մատնանշելով անունները, դերը և օգնության ժամանակ գործադրելու յեղանակը: Ցույց է տալիս, թե ինչպես է կատարվում դեղորայքի դասավորումը և ստիպում է, վոր մարտիկներն իրենք կատարեն դասավորումը, միաժամանակ հարցնելով այս կամ այն դեղի դերի, գործադրման ձևի և պահպանման կանոնների մասին: Հետևյալ պարապմունքի ժամանակ ողակի հրամանատարը բացատրում է պատգարակի դերը, կառուցվածքն ու նրա օգտագործման ձևերը: Ցույց է տալիս, թե ինչպես պետք է ծալել ու բանալ պատգարակը: Առանձնացնում է փոխադրման համար համբանք և մի մարտիկ պայմանականորեն տուժած նշանակելու համար: Ցույց է տալիս, թե ինչպես պետք է բարձրացնել տուժածին և տեղավորել պատգարակի վրա: Այս բոլորը կատարվում է մի քանի անգամ, մինչև վոր բոլոր մարտիկները վարժվեն: Այնուհետև ողակի հրամանատարը կազմակերպում է «տուժածներ»-ի փոխադրում 50–100 մետրի վրա, միաժամանակ բացատրում է, թե ինչպես պետք է մարտիկները գնան փոխադրման ժամանակ: Պարապմունքի ժամանակ պետք է կատարել նաև փոխադրելու վարժություն սանդուխքով բարձրանալիս ու իջնելիս: Անհրաժեշտ է ցույց տալ նաև ձեռքերի վրա փոխադրելու յեղանակը և այդ առթիվ կատարել վարժություններ: Թթվածնային բարձի հետ ծանոթանալիս, պետք է պատմել, թե ինչպես պետք է բարձի մեջ բալոնից թթվածին լցնել, նախազգուշացնելով, վոր նախորոք պետք է համոզվել, թե այդ իրոք թթվածին է, և վոչ ուրիշ գազ: Թթվածնի բարձից օգտվելու ժամանակ, ողակի հրամանատարը մատնանշում է, թե ինչպիսի դեպքերում է տրվում թթվածինը և ցույց է տալիս, թե ինչպես պետք է տուժածին թթվածին տալ:*

**Ձեռնարկ:** *«Բնակելի տան հակաքիմիական պաշտպանությունը»*

# ԹԵՄԱ 3–ՐԴ

## Վիրավորներին առաջին օգնություն ցույց տալը—3 ժամ

Նպատակը: *Սովորեցնել արագ ու ճիշտ կերպով առաջին օգնություն ցույց տալը (կրկնություն առաջներում սովորածի ըստ առաջին աստիճանի ՊՍՊ-ի նորմաների):*

Բովանդակությունը: *Օգնություն միջանցիկ և միակողմանի վիրավորման ժամանակ: Արյունահոսությունը լարանի կամ վոլորքի միջոցով կանգնեցնելը: Վիրակապության կանոններ: Շիներ դնելը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքի ժամանակ ողակի հրամանատարը բացատրությունների համար օգտվում է պլակատից: Մատնանշում է, վոր վիրավորներին օգնություն ցույց տալիս անհրաժեշտ է մաքրություն պահպանել, առանձնապես մաքուր պահել ձեռքերը, բացատրելով, թե ինչպես պետք է փաթաթել վերքը, վորպեսզի այն չկեղտոտվի: Այնուհետև դալիս է վիրակապության ու շիներ դնելու տեխնիկայի շարադրումն և ցուցադրումը, ընդվորում մարտիկներն իրենք իրար վրա պետք է ցույց տան մատնանշված ձևերը, վորպես շիներ գործադրելով առձեռն միջոցները: Այնուհետև ողակի հրամանատար սովորեցնում է արյունահոսությունը կանգնեցնելու ձևերը (վերջավորությունները վերև բարձրացնելը, արյունատար անոթը սեղմելը և լարան դնելը): Այս ձևերը նա ցույց է տալիս մարտիկներից մեկի վրա, վորից հետո մարտիկներն այդ ձևերը կրկնում են ինքնուրույն կերպով:*

*Ողակի հրամանատարը ուշադրություն է դարձնում վոր լարան դնելու ժամանակ մաշկը չճզմվի և հիշեցնում է զարկերակների դասավորման մասին: Դրանից հետո նա անցնում է բինտով*

ու գլխաշորով մարմնի զանազան մասերի վրա վիրակապեր դնելուն, ցույց տալով զանազան յեղանակների գործադրումը մարտիկների վրա և այնուհետև ստիպում է, վոր մարտիկներն իրենք վիրակապեր դնեն:

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 2-րդ թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 4-ՐԴ

### ԹՆ-երով տուժածներին օգնություն ցույց տալը — 3 ժամ

Նպատակը: *Սովորեցնել տուժածին ժամանակին անհրաժեշտ օգնություն ցույց տալը (կրկնել ըստ առաջին աստիճանի ՊՍՊ-ի նորմաների):*

Բովանդակությունը: *ԹՆ ներգործությունը և թունավորվածներին օգնություն ցույց տալը, մաշկի վրա ներգործող և պալարներ առաջացնող, հեղձուցիչ ներգործության և ընդհանրապես թունավոր ներգործության ԹՆ-երով վնասվելիս: Արհեստական շնչառություն տալը ըստ Սիլվեստրի և ըստ Շեֆֆերի: Պաշտպանական հագուստի ուսումնասիրությունը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքի ժամանակ ողակի հրամանատարը օգտագործում է պլակատներ ու մակետներ, ինչպես և դեղորայք, վորոնք հատկացված են ԹՆ-ով թունավորվելիս օգնություն ցույց տալու համար, ցույց տալով, թե ինչպես դրանք պետք է գործածել: Ողակի հրամանատարը պատմում է, թե ԹՆ-երն ինչպես են բաժանվում ըստ մարդու օրգանիզմի վրա ունեցած իրենց ներգործության, թե ինչպես է ներգործում, օրինակ հեղձուցիչ ԹՆ, թունավորման նշանները, ի՞նչ օգնություն պետք է ցույց տրվի: Նույն բանը բացատրում է մի այլ խմբի ԹՆ-ի մասին: Հատուկ ուշադրություն է դարձնում մաշկի վրա ներգործող և պալարներ առաջացնող ԹՆ-երի վրա, պատմելով թունավորման նշանների և օգնություն հասցնելու մասին: Դրանից հետո մարտիկներից մեկն ու մեկի վրա ցույց է տալիս ըստ Սիլվեստրի և ըստ Շեֆֆերի արհեստական շնչառություն կատարելու ձևերը, այնուհետև ստիպելով, վոր նույնը կատարեն մարտիկները: Դրանից հետո ողակը ուսումնասիրում է պաշտպանական հագուստը և մարզվում է այդ հագուստը հագնելու և հանելու մեջ:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 2-րդ թեմայի վերաբերյալ:*



## ԹԵՄԱ 5-ՐԴ

### Զանազան դեպքերում առաջին օգնություն ցույց տալը — 2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել զանազան դեպքերում առաջին օգնություն ցույց տալը:*

Բովանդակությունը: *Առաջին օգնությունը այրվածքների, էլեկտրահոսանքից վնասվելու և ջերմության հարվածի դեպքում:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքի համար օգտագործում է պլակատներ: Մատնանշելով, թե ինչպես են տարբերվում այրվածքները, նա հենց այստեղ էլ ցուցադրում է ունեցած միջոցներով օգնություն ցույց տալու յեղանակները: Այնուհետև ուսումնասիրվում է բոցավառվող հագուստը հանգցնելու յեղանակները: Էլեկտրահոսանքից վնասվածին օգնություն ցույց տալիս, անհապաղ մեկուսացնելու անհրաժեշտությունը, և ապա ցույց է տալիս, թե ինչպես պետք է նրան օգնել: Նշում է ջերմության հարվածի պատճառները (օրինակ, չոր յեղանակին պաշտպանական հագուստով աշխատելը) և ինչպիսի օգնություն պետք է հասցնել: Այս բոլորը կատարվում է գործնականորեն մարտիկներից մեկի վրա:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ վոր 2-րդ թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 6-ՐԴ

### Սանիտարական ողակի աշխատանքը «սպառնալից դրության» ժամանակ յեվ ըստ «Օդային տագնապ» ազդանշանի — 2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ողակին աշխատելու օդային տագնապի պայմաններում:*

Բովանդակությունը: *Ողակի հավաքը: Սանիտարական գույքի ստուգումը և պատրաստում օգնություն ցույց տալու համար:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը մարտիկներին հայտարարում է, վոր մտցված է «սպառնալից դրություն» և հետո անց է կացնում պարապմունքը: Նա հրաման է տալիս ողակի մարտիկների դեղորայքը, վիրակապական միջոցները,— սանիտարական պոստերի սարքավորումը ստուգելու մասին: Ստուգումը պետք է կատարվի արագ, բայց խնամքով: Այնուհետև կազմակերպում է սանիտարական կայանի ծավալումը և*

լրացնում է այդ կայանի սարքավորումը: Դրանից հետո ողակը ցրում է 5–10 րոպեյով, թողնելով մի հերթապահի, վորի միջոցով հայտարարում է «Ողային տագնապ» ազդանշանի մասին: Ընդամին ողակի հրամանատարը ձգտում է ողակի հավաքը կատարել արագ կերպով: Ներկայացած մարտիկներն իրենց հասանելիք գույքը վերցնելով մեկնում են իրենց պոստերը: Այնուհետև ողակի հրամանատարը ստուգում է, թե մարտիկները գիտեն արդյոք իրենց պարտականությունները պոստերում ու սանիտարական կայաններում և պարապմունքի վերջում կատարում է վերլուծություն:

Ձեռնարկ: 1. «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը». 2. «Ինքնապաշտպանության խմբեր»

### ԹԵՄԱ 7–ՐԴ

**Սանիտարական պոստ աշխատանքը ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի յեվ հարվածման համակցված օջախում—4 ժամ**

Նպատակը: *Ողակին քիմիական հարձակման պայմաններում և հարվածման համակցված օջախում աշխատելու ունակություններ պատվաստելը:*

Բովանդակությունը: *Սանիտարական ողակի գործողությունը հարվածման համակցված օջախի պայմաններում: Տուժածներին վորոնելը և առաջին օգնություն հասցնելը:*

Մեթոդական ցուցումներ: *Այս թեմայով անց է կացվում յերկու պարապմունք, վոր հանդիսանում են 6–րդ թեմայի շարունակությունը: Սկզբում մարտիկները դրվում են այն դրության մեջ, ինչ դրության մեջ նրանք գտնվել են 6–րդ թեմայի վերաբերյալ վերջին պարապմունքի ժամանակ: Ողակի հրամանատարը տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը: Պարապմունքը կատարվում է տակտիկական ֆոնի վրա, ողակը մարզելով հակագազով և պաշտպանական հագուստով հարվածման օջախում աշխատել կարողանալու համար: Յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ իրադրությունը պետք է այնպես բազմազանել, վորպեսզի մարտիկները կարողանան օգնություն ցույց տալ ամեն տեսակ պայմաններում՝ ֆուգասային ռումբի բեկորներից, հրդեհիչ և քիմիական ռումբերից, ողանավերից թափված ԹՆ տուժածներին: Տուժածի դերը կատարելու համար պետք է հրավիրել ինքնապաշտպանության խմբի մյուս ողակների մարտիկներին: Այս*



*պարապմունքի ժամանակ նաև մշակվում է վիրավորին հակագազ հագցնելու և այդ վիրավորին փոխադրելու ձևերը: Բացի այդ, ողակը վարժվում է սանիտարական հետախուզության և հարվածման օջախում տուժածներին վորոնելու ասպարեզում: Պարապմունքներից մեկը պետք է կատարել գիշերային պայմաններում:*

## Ѵ. ԿԱՐԳ ՊԱՀՊԱՆՈՂ ՈՂԱԿԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ—20 ԺԱՄ

### ԹԵՄԱ 1–ԻՆ

**Բնակելի տան ՀՈՊ-ի կազմակերպությունը—2 ժամ**

Նպատակը: *Ողակին ծանոթացնել տան հակաօդային պաշտպանության կազմակերպության հետ և հատկապես կարգ պահպանելու կազմակերպության հետ:*

Բովանդակությունը: *Տան հակաօդային պաշտպանության պլանը: Կարգ պահպանելու և լուսաքողարկման ձեռնարկումները: Կարգ պահպանող ողակի խնդիրները: Ինքնապաշտպանության խմբի մարտիկների ընդհանուր պարտականությունները: Կարգ պահպանող ողակի մարտիկների պարտականությունները:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը ծանոթացնում է ողակին տան ՀՈՊ–ի պլանի հետ և դրա համար կազմակերպում է էքսկուրսիա տան տերիտորիայում և ցույց է տալիս հրշեջ կապի և դիտողության, սանիտարական, քիմիական և կարգ պահպանելու պոստերի տեղերը: Ողակը շրջագայում է պոստերը ըստ նախորոք կազմված մարշրուտի: Պոստերում ինքնապաշտպանության խմբերի մարտիկների պարտականություններին հետ ողակի հրամանատարը ծանոթացնում է տեղում: Նա մանրամասն բացատրում է նրանց պարտականությունները զանազան ձևի հարձակումների դեպքում (հրդեհիչ, ֆուգասային ու քիմիական ռումբեր ընկնելու դեպքում, հատուկ գործիքներով ԿԹՆ (կայուն թունավոր նյութեր) թափելու դեպքում): Ծանոթացնում է տան ՀՈՊ–ի պլանի համաձայն լուսաքողարկումը իրագործելու հետ: Հատուկ ուշադրություն է նվիրվում դրսի դույզ պոստերին և «Ողային տագնապ» ազդանշանի ժամանակ փողոցում գտնված քաղաքացիների թաքստոցներում դրված պոստերին:*

Օղակի հրամանատարը ցույց է տալիս ապաստարանի տեղը, պատմում է թե ինչպես է կազմակերպված կարգի պահպանումը և լուսաքողարկումը ապաստարանում և նրա մոտերքը: Ծանոթացնում է սահմանված ազդանշանների հետ՝ «Օդային տագնապ», «Քիմիական տագնապ» և «Ավարտ»: Ցույց է տալիս ազդանշանային գործիքները,— միջոցները, ցուցադրելով նրանց գործողությունը: Ցույց է տալիս ինքնապաշտպանության խմբի գույքի պահեստի տեղը և ծանոթացնում է այդ գույքի պահպանման և օգտագործման կարգի հետ: Յեզրափակման ժամանակ օղակի հրամանատարը պատմում է կարգ պահպանող օղակի անելիքների մասին և դերի մասին և այն պատասխանատվության մասին, վորը ընկնում է օղակի մարտիկների վրա: Առանձնապես ընդգծվում է կարգ պահպանող օղակի աչալրջության անհրաժեշտությունը ՀՕՔՊ-ի պայմաններում (պայքար վնասարարական գործողությունների դեմ, ժողովրդի թշնամիների կողմից տարածվող չարանենգ լուրերի դեմ):

**Ձեռնարկներ:** 1. Իր տան ՀՕՊ-ի պլանը, 2 «Ինքնապաշտպանության խումբը» 3. «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:

## ԹԵՄԱ 2–ՐԴ

### Կարգ պահպանող օղակի պոստերի կազմակերպումը տան մեջ յեվ մարտիկների պարտականությունները պոստերում– 2 ժամ

Նպատակը: *Մանրակրկիտ ծանոթացնել պոստերի կազմակերպման հետ և ուսումնասիրել մարտիկների պարտականությունները պոստերում:*

Բովանդակությունը: *Կարգ պահպանող օղակի շարժական և անշարժ պոստերի տեղերը: Պարտականությունները պոստերում: Կարգ պահպանող օղակի հավաքի տեղը և նրա ռեզերվը: Կարգ պահպանող օղակի մարտիկների ընդհանուր պարտականությունները:*

Մեթոդական ցուցումներ: *Օղակի հրամանատարը ծանոթացնում է մարտիկներին կարգ պահպանող այն պոստերի դասավորման հետ, վորոնք նախատեսված են տան ՀՕՊ-ի պլանի համաձայն, և նրանց հետ մանրակրկիտ մշակում է յուրաքանչյուր պոստի պարտականությունը: Պարապմունքի ընթացքում օղակի հրամանատարը ծանոթացնում է բոլոր մուտքերի, յելքերի, սանդղավանդակների հետ: Օղակի մարտիկները պոստերի պարտականությունների յուրացումը պետք է անցնեն գործնական*



*կարգով: Օղակի հրամանատարը մարտիկին պոստի կանգնեցնելով բացատրում է նրան, թե ինչ տերիտորիա ու օբյեկտներ են հանձնարարվում նրա հսկողությանն ու պահպանմանը և նա ինչ պետք է անի հրդեհ առաջանալիս, ռումբեր պայթելիս, ԿԹՆ շաղ տալիս, զանազան անձերի կողմից իր հսկողությանը և պահպանմանը հանձնարարված տերիտորիայում ու օբյեկտում կարգը խանգարելիս: Հետո ստիպում է մարտիկին ցույց տալ իր հսկողությանը հանձնարարված տերիտորիան ու օբյեկտները և կրկնել պարտականությունները: Այս նույնը նա կատարում է հետևողականորեն կարգ պահպանող օղակի բոլոր մնացած պոստերում ևս:*

**Ձեռնարկ:** Նույնը, ինչ վոր 1-ին թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 3–ՐԴ

### Տան յեվ բակի լուսաքողարկում - 2 ժամ

Նպատակը: *Պատվաստել տվյալ տան և նրա բակի քողարկման կանոնների յուրացման գործնական ունակությունները:*

Բովանդակությունը: *Լուսաքողարկման ձևերն ու յեղանակները: Լույսի անջատումը: Պահպանիչ թասակով կապույտ լույսի գործադրումը: Լուսամուտների համար վարագույրներ կիրառելը և այլն:*

*Տան բնակիչների կողմից լուսաքողարկումն անցկացնելու կանոնները: Հսկողություն լուսաքողարկման կանոնների պահպանման վրա: Մարտական նշանակություն ունեցող լուսավոր կետերի քողարկումը (ցուցիչներ, լապտերներ, լվացման կետերի, առաջին օգնության կետերի, հավաքակայանների վրա յեղած լույսերը):*

Մեթոդական ցուցումներ: *Այս պարապմունքը օղակի հրամանատարն անց է կացնում մութն ընկնելուց հետո: Ամենից առաջ նա ծանոթացնում է տան լուսաքողարկման պլանի հետ: Գործնականում ուսումնասիրվում է սպառնալից դրության հայտարարելու ժամանակ տան լույսը կրճատելու կարգը: Այնուհետև ըստ «Օդային տագնապ» ազդանշանի իրագործվում է տան և բակի ինչպես և տան վրա փողոցի կողմից յեղած լույսի կետերի լուսաքողարկումը: Լուսաքողարկման յեղանակներն ու ձևերը կատարվում են գործնականորեն, այսինքն օղակի հրամանատարը ցույց է տալիս, թե ինչպես և ինչ դեպքերում պետք է օգտվել*

բակի և փողոցի արտաքին լույսերի անջատելու և միացնելու հատիչից, ինչպես և ամբողջ տան հատիչից: Ինչպիսի լույս է տալիս կապույտ գույնի էլեկտրոլամպը և ինչի համար է պետք նրա վրայի Թասակը: Ինչպես լուսամուտների վրայի վարագույր սարքել, որպեսզի լույսը բնակարանից դուրս չթափանցի: Ինչպես օգտվել լապտերներից և նրանց կառուցվածքը: Ինչպես են սարքում լուսավոր ցուցիչները և դրսի լամպերը, որպեսզի վերևից դրանց լույսը չնկատվի: Ոդակը պետք է ուսումնասիրի իր տան էլեկտրոցանցի պլանը, որպեսզի գիտենա, Թե ինչպիսի միջոցներ կարելի յե ձեռք առնել այն անձերի նկատմամբ, վորոնք իրենց բնակարաններում (փակ) լույսը վառ են Թողել, գիտենալ, Թե վորտեղից և ինչպես կարելի յե անջատել լույսը միայն տվյալ բնակարանի կամ սենյակի համար տնային-ընդհանուր անջատիչից անկախ:

**Ցանկալի:** Նույնը, ինչ վոր 1-ին Թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 4-ՐԴ

### Կարգ սահմանող ոդակի գործողությունը սպառնալից դրություն հայտարարելու ժամանակ—2 ժամ

Նպատակը: *Սպառնալից դրուԹյան պայմաններում աշխատելու գործնական ունակուԹյուն պատրաստել:*

Բովանդակությունը: *Հավաքը հավաքակայանում: Իր գույքի (հակագազեր, սուլիչներ, ազդանշանի միջոցներ) ստուգումն ու պատրաստումը: Մարտիկների՝ իրենց պարտականուԹյունների մասին ունեցած գիտելիքների ստուգումը: Պոստերի կողմից նրանց հանձնված տերիտորիայի (մուտքերի, ելքերի, սանդուխքների, դրսի լույսերի, ազդանշանի միջոցների) դրուԹյան ստուգումը: Սպառնացող դրուԹյուն հայտարարելու մասին տան բնակիչներին նախազգուշացնել: ԲնակչուԹյանը տեղեկացնել տան ՀՕՊ-ի հերԹապահուԹյուն կատարելու կարգի մասին:*

Մեթոդական ցուցումներ: *Ոդակի հրամանատարը ոդակի մարտիկներին հայտարարում է սպառնալից դրուԹյուն մտցնելու մասին և դրանից հետո գործնականորեն ստուգում է յուրաքանչյուր մարտիկի գիտելիքների ու պարտականուԹյունների մասին: Դրա համար ոդակի հրամանատարը յուրաքանչյուր մարտիկին առաջադրանք է տալիս ստուգելու տան պատրաստ լինելը ՀՕՊ-ի համար. մեկին հանձնարարում է ստուգել ելքերի ու մուտքերի դրուԹյունը (փա՞կ են արդյոք դռները, վո՞ր տեղ են պահվում բանալիները)՝ մյուսին հանձնարարում է ստուգել սանդղավանդակների ու միջանցքների դրուԹյունը (չե՞ն լցված, կամ չե՞ն փակված կողմնակի առարկաներով)․ յերրորդին՝ ստուգել Թափկված կողմնակի առարկաներով). յերրորդին՝ ստուգել Թաքստոցների և հերԹապահ լուսավորուԹյան (կապույտ լույս և այլն) դրուԹյունը:*

Առաջադրանք ստացած յուրաքանչյուր մարտիկ այդ առաջադրանքը անհապաղ կատարում է: Նրանից հետո, յերբ բոլորը կատարում են, մարտիկները հերԹով զեկուցում են կատարման մասին: Անհրաժեշտ է ուշադրուԹյուն դարձնել, վոր մարտիկը իր անելիքը հասկանա: Դրա համար էլ անպայման պիտի պահանջել մարտիկներից խնդիրները կրկնել և կատարման մասին զեկուցել: Պարապմունքի ընԹացքում ոդակի հրամանատարը ոդակի մարտիկների գործողուԹյան ուղղուԹյուն է տալիս, ցույց է տալիս, Թե ինչպես պետք է անել, ուղղում է սխալները: Պարապմունքի վերջում կատարում է կարճ վերլուծուԹյուն:

**Ցանկալի:** Նույնը, ինչ վոր 1-ին Թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 5-ՐԴ

### Կարգ պահպանող ոդակի գործողությունները ըստ «Օդային տագնապ» ազդանշանի—4 ժամ

Նպատակը: *Ոդակին ցերեկային ու գիշերային «Օդային տագնապ» ազդանշանի պայմաններում աշխատելու գործնական ունակուԹյուններ հաղորդել:*

Բովանդակությունը: *Ոդակի մարտիկների կողմից ըստ «Օդային տագնապ» ազդանշանի իրենց պոստերը գրավելը: «Օդային տագնապ» ազդանշանի մասին նախազգուշացնել տան բնակիչներին, առանձնապես գիշեր ժամանակ: Բնակիչների կողմից իրենց անելիքների և լուսաքողարկման կանոնների կատարման ստուգումը: Դրսի լուսավորուԹյան անջատումը: «Օդային տագնապ» ազդանշանի ժամանակ փողոցում գտնվող քաղաքացիներին Թաքստոցներն ուղարկելը: ՀսկողուԹյուն կասկածելի անձերի վրա, պայքար լույսը ԹարԹողների դեմ և այլն: Խուճապի լոկալիզացիան: Գույքի պահպանումը: Միլիցիային օժանդակուԹյուն ցույց տալը (ձերբակալել և միլիցիային հանձնել կասկածելի անձերին և լուսաքողարկման կանոնները խախտողներին):*

Մեթոդական ցուցումներ: *Ոդակի հրամանատարն այս Թեման անց է կացնում յերկու անգամ՝ ցերեկն ու գիշերը: Պարապմունքը*

*սկսելուց առաջ ողակի հրամանատարը ստուգում է ողակի մարտիկների՝ ՀՕՊ-ի պայմաններում բնակչության անելիքների այն կանոնների վերաբերյալ գիտելիքները, որ սահմանել է աշխատավորական պատգամավորների տեղական խորհուրդը իր բնակելի վայրի համար: Ողակի հրամանատարից ստանալով առաջադրանք և ցուցումներ՝ «Օդային տագնապ» ազդանշանի ժամանակ իրենց պարտականությունների մասին և կրկնելով այն, ողակի մարտիկները ցրվում են ըստ պոստերի և անցնում աշխատանքի:*

*Թաքստոցի պոստը ժամանողների հաշվառում է կատարում: Դրսի պոստերը կատարում են փողոցի բեռնաթափում (կարելի յե այնպես անել, որ տան բակը յեկողները բոլորը միանգամից ուղարկվեն թաքստոցները, որտեղ նրանք հաշվառման են յենթարկվում, և հետո նրանց թույլատրվում է ազատ յելք): Որպես դերակատար մասնակից է դարձվում ինքնապաշտպանության խմբի ամբողջ կազմը:*

*Լուսաքողարկման պոստը հետևում է տունը մթնացնելուն: Ծայրահեղ դեպքում, յեթե տան բնակչությունը պարապմունքին չի մասնակցում, ապա կատարվում է միայն լույսի դրսի կետերի լուսաքողարկում, իսկ ներսում միայն սանդղավանդակներում, թաքստոցներում և պահեստարաններում:*

*Պարապմունք անցկացնելու ժամանակ պետք է պոստերում մարտիկներին փոփոխել, և տալ բազմազան միջանկյալ խնդիրներ այն հաշվով, որպեսզի ողակի ողջ կազմին գույքի պահպանման, լուսաքողարկման և այլն պրակտիկա ձեռք բերելու հնարավորություն տրվի: Պարապմունքի ընթացքում ողակի հրամանատարը ջանում է, որպեսզի մարտիկները լավագույն կերպով յուրացնեն իրենց պարտականությունները, անձամբ ուղղելով և ցույց տալով, ինչ պետք է անել այս կամ այն պայմաններում: Պարապմունքի վերջում կատարում է կարճ վերլուծություն:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:*

## ԹԵՄԱ 6-ՐԴ

**Կարգ պահպանող ողակի մարտիկների աշխատանքը «Քիմիական տագնապ» ազդանշանի ժամանակ—2 ժամ**

Նպատակը: *Ողակին՝ ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի աշխատելու գործնական ունակություններ պատվաստել:*

Բովանդակությունը: *Հարվածման օջախում պահպանության ծառայությունը: Ոժանդակություն տան բնակիչներին վարակված վայրից դուրս գալուն և դուրս հանելուն: Վարակված տեղերի պահպանությունը:*



Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը քիմիական ողակի հրամանատարի օժանդակությամբ: Այս պարապմունքը հանդիսանում է նախորդի շարունակությունը: Ողակի հրամանատարը համառոտ կերպով հիշեցնում է, թե ինչով վերջացավ նախորդ պարապմունքը, տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը: Ըստ այդ ազդանշանի բոլորը հագնում են հակագազերը: Ողակի հրամանատարը նշում է վարակված վայրի իմիտացիայի միջոցով: Դրանից հետո, յերկու մարտիկների տալիս է առաջադրանք և նրանց ուղարկում է վարակված վայրի պոստը, քամին փչած կողմից: Հետո նույնանման պոստը, բայց արդեն մաշկի պաշտպանման միջոցի գործադրումով, ուղարկում է ևս յերկու մարտիկ՝ քամուն հակառակ: Մնացածները լինում են լողներ: Ողակի հրամանատարը ցույց է տալիս, թե ինչպես պետք է կատարել վարակված վայրից մարդկանց դուրս հանելը կամ դուրս գալը: Դուրս բերվող անձերի դերը կատարելու համար, խմբի պետի ցուցումի համաձայն, պետք է ներգրավել ինքնապաշտպանության խմբի ողջ կազմը:*

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ*

## ԹԵՄԱ 7-ՐԴ

**Կարգ պահպանող ողակի գործողությունը հրդեհի առաջացման դեպքում—2 ժամ**

Նպատակը: *Մարզեցնել հրդեհի դեպքում ամբողջ ողակով ծառայություն կատարելու ասպարեզում:*

Բովանդակությունը: *Մարդիկ առաջադրել շղթայապատման համար: Բնակիչների և գույքի եվակուացիա: Գույքի պահպանում: Տուժածներին (այրվածքներ, ուշաթափություններ, թունավորումներ) ուղարկել սանիտարական կայան: Կասկածելի անձանց ձերբակալելը և միլիցիայի օրգաններին հանձնումը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարն այս պարապմունքը անց է կացնում հրշեջ ողակի հրամանատարի օգնությամբ, մոտավորապես նույն կարգով, ինչ 6-րդ թեմայում: Գործնականորեն ցույց է տալիս, թե ինչպես է կազմակերպում հարվածման օջախի շղթայապատումը: Կազմակերպում է բնակիչների և գույքի եվակուացիա, ինչպես և գույքի պահպանում: Մարզվելու համար դատարկում են տան վարչության դրաս-*

նյակի, կարմիր անկյան և այլնի երերը: Հրդեհի դեպքում տուժածներին օգնություն ցույց տալը պետք է կատարել գործնականորեն (փոխադրել մինչև սանիտարական կայանը): Տուժածների դերը կատարում են սանիտարական ողակի մարտիկները:

**Ցուցում:** Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:

## ԹԵՄԱ 8–ՐԴ

**Կարգ պահպանող ողակի գործողությունը ավերումների ու փլվածքների դեպքում—2 ժամ**

Նպատակը: *Ֆուգասային ռումբերի պայթյունից առաջացած ավերումների ժամանակ աշխատելու ու ծառայություն կատարելու ունակություններ պատվաստել:*

Բովանդակությունը: *Կարգ պահպանելու ծառայությունը ավերումների ու փլվածքների դեպքում: Գույքի պահպանությունը: Օգնություն և աջակցություն վիրավորներին և ավերումներն ու փլվածքները լիկվիդացիայի ենթարկող բրիգադին: Չպայթած ռումբի վայրի շղթայապատում:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը կատարվում է 6 և 7-րդ թեմաների նման: Ողակի հրամանատարը նշանակում է ֆուգասային ռումբերի պայթյունը փոքրիկ պայթուցիկ ծրարներ պայթեցնելով, իսկ բուն ավերումները՝ փլվածքները և այլն՝ պայմանական նշաններով (ցուցիչներով): Գործնականորեն կազմակերպում է ավերված վայրի պահպանումը, թույլ չի տալիս ավելորդ մարդկանց կուտակում, վորոնք կարող են խանգարել ավերումները ու փլվածները լիկվիդացիայի ենթարկելու աշխատանքները: Նույնպես գործնականորեն կազմակերպում է չպայթած ռումբի շրջանի շղթայապատումը: Ողակը պետք է սովորի գերազանց կերպով օգնել սանիտարական ողակին՝ պատգարակով և առանց նրան վիրավորներ փոխադրելու ասպարեզում: Բացի այդ, գործնականորեն ուսումնասիրվում է մարտիկների հերթափոխության կարգը պոստերում (պարտականությունների հանձնում):*

**Ցուցում:** Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:



## ԹԵՄԱ 9–ՐԴ

**Կարգ պահպանող ողակի աշխատանքը հարվածման համակցված օջախում—2 ժամ**

Նպատակը: *Մարտական դրության բարդ պայմաններում աշխատելու ունակություններ պատվաստելը:*

Բովանդակությունը: *Պահպանության ծառայությունը հարվածման համակցված օջախում: Աջակցություն տան բնակիչներին հարվածման օջախից դուրս գալուն: Հարվածման օջախների պահպանումը: Խուճապն ու անկարգությունը լիկվիդացիայի ենթարկելու ձեռնարկումները: Կասկածելի տարրերի ձերբակալելը և միլիցիայի օրգաններին հանձնելը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը պարապմունքը անց է կացնում մարտական բարդ իրադրության տակտիկական ֆոնի վրա (միաժամանակ վարակում, ավերում և հրդեհ՝ տան զանազան տեղերում): Ողակի հրամանատարը մարտիկներին դասավորում է ըստ պոստերի և ապա տալիս է զանազան կարգի միջանկյալ խնդիրներ: Օրինակ, պոստ № 1-ին՝ «Ֆուգասային ռումբի պայթյունից ավերվել է շենքի ձախ թևը», ընդվորում պայթյունը նշանակում է փոքր պայթուցիկ ծրարը պայթեցնելու միջոցով, իսկ ավերման վայրերը՝ պայմանական նշաններով, այն է՝ մի ձողի ամրացված ֆաներայի վրա գրելով՝ «Այստեղ ավերվել է շենքի 5 մետր բարձրություն և 3 մետր լայնություն ունեցող անկյունը» կամ «Այստեղ ավերվել է ջրմուղը և ջուրը ուժեղ կերպով խփում է բակի մեջ» (այդ կարելի յե կատարել, բաց անելով հրշեջ ծորակներից մեկը և ջուրը թողնելով բակի մեջ): № 2 պոստին՝ «Չպարզված պատճառներով վառվել է բակի ցախատունը (նախազգուշացման միջոցներ ձեռք առնելով վառում են մի քանի փայտե հին արկղներ) և տրվում է «Քիմիական տագնապ» ազդանշանը: Միաժամանակ կատարվում է իմիտացիա պայթեցնելով դեղին թեփով լցված պայթուցիկ ծրար: Պարապմունքի ընթացքում ողակի հրամանատարը ղեկավարում է պոստերի գործունեյությունը, մտցնելով այս կամ այն միջանկյալ տվյալները, իսկ յեթե այդ չի օգնում, ապա ողակին ցույց է տալիս, թե ինչ պետք է անել յուրաքանչյուր առանձին դեպքում: Ողակի հրամանատարը ձգտում է, վորպեսզի պոստում կանգնած մարտիկները հստակ կերպով*

կատարեն իրենց պարտականությունները, և յեթե պետք է, պահանջում է կրկնել աշխատանքը: Պարապմունքի վերջում կատարվում է վերլուծություն:

**Ձեռնարկ:** Նույնը, ինչ վոր 1-ին թեմայի վերաբերյալ:

# VI. ԿԱՊԻ ՅԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՂԱԿԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ—20 ԺԱՄ

## ԹԵՄԱ 1-ԻՆ

### Տան ՀՕՊ-ի կազմակերպում—2 ժամ

Նպատակը: *Ողակին ծանոթացնել տվյալ շենքի հակաօդային պաշտպանության կազմակերպման հետ և հատկապես տան մեջ ու կապի հարցերի հետ, ինչպես և կապի ու ողակի պարտականությունների հետ:*

Բովանդակությունը: *Տան հակաօդային պաշտպանության պլանը: Դիտողությունը, ծանուցումը և կապը տան մեջ: Ողակի խնդիրները: Ինքնապաշտպանության խմբի ընդհանուր պարտականությունները և հատկապես կապի և դիտողության ողակի մարտիկների պարտականությունները:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը անց է կացնում ողակի հրամանատարը: Տվյալ տան ՀՕՊ-ի պլանի հետ նա ողակին ծանոթացնում է տան բակի տերիտորիայով էքսկուրսիա կատարելիս: Ընդամենը ցույց է տալիս քիմիական, սանիտարական, հրշեջ, կարգ պահպանող և այլ պոստերի տեղերը, շրջագայելով այս պոստերը նախորոք կազմված մարշրուտի համաձայն: Հենց այստեղ էլ տեղն ու տեղը ծանոթացնում է պոստերի պարտականությունների հետ՝ հարձակման այս կամ այն յեղանակների ժամանակ (հրդեհիչ, ֆուգասային և քիմիական ռումբեր ընկնելու, ինչպես և ավիացիոն գործիքներից ԹՆ թափելու դեպքում):*

*Այնուհետև ծանոթացնում է գազապաստարանի, լվացվելու կայանի տեղավորման և նրանց օգտագործման կանոնների հետ, ինչպես և սահմանված հետևյալ ազդանշանների հետ՝ «Օդային տագնապ» և «Ավարտ», ցուցադրելով ազդանշանային գործիքներն ու միջոցները՝ գործողության ընթացքում:*

*Այնուհետև ողակի հրամանատարը մարտիկին ծանոթացնում է կապի ողակի հավաքակայանի և դիտողության պոստերի դասավորության հետ, պատմում է կապի ողակի և դիտողության ողակի՝ տան ՀՕՊ-ի ասպարեզում ունեցած դերի ու խնդիրների*



*մասին և մարտիկների՝ պատասխանատվությունը հակառակորդի ավիացիայի գործողությունները ժամանակին նշմարելու և տան բնակչությանը քիմիական վտանգի մասին, ինչպես և ինքնապաշտպանության խմբի պետին՝ կատարված ավերումների և տան ու նրա տերիտորիան վնասվելու մասին ծանուցելու ասպարեզում ունեցած պատասխանատվության մասին: Առանձնապես նշվում է խմբերի ու ողակների միջև, ինչպես և խմբի պետի ու քաղզեկի միջև լավ կապ ունենալու անհրաժեշտությունը:*

**Ձեռնարկ:** 1. Տվյալ տան ՀՕՊ-ի պլանը. 2 «Ինքնապաշտպանության խումբը». 3. «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:

## ԹԵՄԱ 2-ՐԴ

### Իր տան տերիտորիան—2 ժամ

Նպատակը: *Գերազանց գիտենալ իր տան տերիտորիան:*

Բովանդակությունը: *Իր տան տերիտորիայի ուսումնասիրությունը: Տան բակի և նրան կից հարևան բակերի ու այն փողոցի, վորտեղ գտնվում է տունը, բնորոշ առանձնահատկությունները:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը ողակի հետ կատարում է էքսկուրսիա ամբողջ տան ու բակի մեջ, ծանոթանալով ամեն մի շինության հետ (ինչպիսի շինություն է այն՝ քարից, փայտից, հարկերի քանակը, բնակելիությունը):*

*Այնուհետև ողակը ծանոթանում է ներքին պլանավորման հետ, ուսումնասիրում է բոլոր յելքերն ու մուտքերը, անցնելով չերդակը, կաթսայի շենքը և այլն:*

*Ուսումնասիրում է պաշտոնատար անձանց բնակարանի ինքնապաշտպանության խմբի բոլոր մարտիկների բնակարանների դասավորությունը: Ապա ողակը սկսում է ուսումնասիրել յերթևեկության ուղիները (անցքերը, կառանցները) տան և նրան կից տերիտորիայում:*

*Սրանով ավարտվում է պարապմունքը:*

**Ձեռնարկ:** «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»

## ԹԵՄԱ 3-ՐԴ

### Իր թաղի յեվ ՏՀՕՊ-ի տեղամասի տերիտորիան—2 ժամ

Նպատակը: *Ուսումնասիրել իր թաղի և տեղամասի տերիտորիան, գիտենալ ՀՕՊ-ի օրգանների ու հիմնարկների տեղը:*

Բովանդակությունը: *Տեղամասում հարևան և կարևորա-*

գույն շենքերի անունները: ՀՕՊ-ի մոտիկ հիմնարկների և ՏՀՕՊ-ի տեղամասի ու թաղի օրգանների դասավորության տեղը: Հարևան տների ՀՕՊ-ի կազմակերպությունների հետ ծանոթանալը:

Մեթոդական ցուցումներ: *Օղակի հրամանատարը պարապմունքը կատարում է, կազմակերպելով նախօրոք կազմված մարշրուտով էքսկուրսիա, սկզբում հարևան բակերի, ապա թաղի ու տեղամասի տերիտորիայում: Նա օղակին ծանոթացնում է իր տեղամասի ՀՕՊ-ի բոլոր կազմակերպությունների ու հիմնարկների հետ (ինքնապաշտպանության մոտիկ խմբեր, հիվանդանոցներ, դեղատներ, հրշեջ կայաններ, ապաստարաններ, լվացվելու կետեր, ՏՀՕՊ-ի տեղամասի շտաբ, միլիցիայի բաժանմունք, Պաշավիաքիմի շրջխորհրդի ՀՕՔՊ-ի ուսումնական կայանի), նրբանցքների ու փողոցների անունների և այնտեղ գտնված կարևորագույն հիմնարկների, ֆաբրիկաների ու գործարանների հետ:*

*Օղակի հրամանատարը հատուկ ուշադրություն է դարձնում այն բոլոր ուղիները գիտենալու անհրաժեշտության վրա, որտեղից կարելի յե գնալ տեղամասի ՀՕՊ-ի օրգաններն ու հիմնարկները այն դեպքում, յերբ նրանցից մի քանիսը վարակված կլինեն ԹՆ-ով:*

Ձեռնարկ: *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»*

## ԹԵՄԱ 4-ՐԴ

### Հեռախոսից օգտվելու լրատարի ծառայությունը—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել հեռախոսով խոսելը, ինչպես և հրամաններ ընդունելն ու հաղորդելը:*

Բովանդակությունը: *Կապավորի պարտականությունը: Հեռախոսից օգտվելու կանոնները: Հեռախոսով մեկին կանչելու, հրաման տալու, զեկուցագիր ընդունելու ու հաղորդելու կարգը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը կատարում է օղակի հրամանատարը: Բացատրելով կապավորի պարտականությունը, նա պարտավոր է պարզել, թե ինչի համար պետք է հրաման ստանալիս այն կրկնել: Այնուհետև կատարում է մարտիկների՝ տրված հրամանները հաղորդելու մարզանք:*

*Սովորեցնելով բանավոր հրամանների հաղորդելը, օղակի հրամանատարը սովորեցնում է գրավոր հրամաններ (ծրարներ) հանձնելը և անցնում է հեռախոսից օգտվելու կանոնները ուսումնասիրելուն: Պարապմունքի այս մասը կատարվում է այնպիսի շենքում, վորտեղ կա հեռախոս: Պետք է ծանոթացնել տան մեջ և ռայոնում յեղած հեռախոսների սխեմի, ինչպես և այդ հեռախոսներից օգտվելու կարգի հետ: Ուսումնասիրվում են նաև ՀՕՊ-ի օրգանների ու հիմնարկների հեռախոսի համարները, վորոնք յուրաքանչյուր մարտիկ պետք է անգիր գիտենա (ՏՀՕՊ-ի տեղամասի շտաբ, միլիցիայի շրջանային բաժանմունք, Պաշավիաքիմի շրջխորհուրդ, լվացվելու մոտակա կայան, հրշեջ կայան, բժշկասանիտարական կայան և այլն):*

*Պարապմունքը յեզրափակելիս օղակի մի մասը մեկնում է յերկրորդ հեռախոսի մոտ և յերկու խմբերի միջև անց է կացնում հեռախոսային խոսակցություն (վոչ բարդ բանավոր հրամանների հաղորդում և ընդունելություն):*

*Օղակի հրամանատարը մեծ ուշադրություն է դարձնում այն անձանց վրա, վորոնք յերբեք հեռախոսով չեն խոսել, ընդվորում նշում է կարճ խոսելու անհրաժեշտությունը:*

Ձեռնարկ: *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:*

## ԹԵՄԱ 5-ՐԴ

### Հեռախոսագրի ընդունումն ու հաղորդումը—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել հեռախոսագրի ընդունումն ու հաղորդումը:*

Բովանդակությունը: *Հեռախոսով հաղորդումներ ընդունելու և տալու կարգը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը կատարում է օղակի հրամանատարը: Նա օղակը բաժանում է յերկու խմբի (հեռախոսագիր ընդունող և հաղորդող) և ցույց է տալիս նրանց պարապմունքի տեղերը: Այնուհետև յուրաքանչյուր մարտիկին տալիս է հեռախոսագրերի նախօրոք կազմված տեքստերը և ինքը մնում է հեռախոսագիր տվող խմբակի հետ: Ընդունող խմբին օղակի հրամանատարը տալիս է հեռախոսագրերի բլանկներ կամ թուղթ հեռախոսագրեր ընդունելու ձևով տան ՀՕՊ-ի պետի անունից և նրա անվան:*

*Աշխատանքի ընթացքում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վոչ պարզ բառերը լավ հաղորդելու վրա: Հենց վոր այն խմբակը, վորի մեջ գտնվում է օղակի հրամանատարը, ավար-*

տում է հաղորդումը, հրամանատարը գնում է ընդունող խմբի մոտ և ստուգում է նրա հաղորդումը: Ողակի հրամանատարը պետք է ուշադրություն դարձնի հեռախոսագրերի գրանցումը ճիշտ և խնամքով կատարելու վրա:

**Ձեռնարկ:** *Նույնը, ինչ որ 4-րդ թեմայի վերաբերյալ*

## ԹԵՄԱ 6-ՐԴ

### Օդային հարձակման միջոցների գործադրման արտաքին նշանները — 2 ժամ

Նպատակը: *Ուսումնասիրել օդային հարձակման միջոցների գործադրման արտաքին նշանները:*

Բովանդակությունը: *Ֆուգասային, բեկորային, հրդեհիչ ու քիմիական ավիառումբերի պայթելու նշանները: Օդանավերից հատուկ գործիքներից ԹՆ-եր շաղ տալու նշանները:*

*Վնասվածքների տեղը, բնույթն ու չափը արտաքին նշաններով որոշելու պրակտիկան:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը ողակի մարտիկներին ասում է օդային հարձակման միջոցների գործադրման արտաքին նշանների մասին: Այնուհետև տան բակում ցույց է տալիս բոլոր իմիտացիոն այն միջոցները, վորոնք գործածվում են ՀՕԲՊ-ի ուսուցման համար:*

**Ձեռնարկ:** *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:*

## ԹԵՄԱ 7-ՐԴ

### Դիտողության պոստն ու նրա սարքավորումը — 2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել դիտողության պոստի սարքավորումից օգտվելը:*

Բովանդակությունը: *Դիտողության պոստի տեղը և նրա սարքավորումը, հողմաչափից օգտվելու կանոնը:*

Մեթոդական ցուցումներ: *Ողակի հրամանատարը ծանոթացնում է դիտողության պոստի տեղը ընտրելու կանոնների հետ: Գալով դիտողության պոստի համար ընտրված վայրը, ողակի հրամանատարը ցույց է տալիս իր և հարևան տների ու բակերի տերիտորիաները: Ցանկալի յե այս պարապմունքը կատարել յերեկոյան: Դիտողության պոստից ողակի հրամանատարը ցույց է տալիս ողակի կազմին իրեն հայտնի մեծ շենքերն ու ՀՕՊ-ի օրգանների և հիմնարկների դասավորման յերևացող տեղերը:*



*Պարապմունքի յերկրորդ մասը հատկացվում է պոստի նյութական մասը և առանձնապես հողմաչափը ուսումնասիրելուն: Ծանոթացնելով հողմաչափի կառուցվածքի ու օգտագործման կարգի հետ, անց է կացնում այդ հողմաչափով աշխատելու պրակտիկ ուսուցումը (քամու ուղղությունն ու արագությունը որոշելը):*

*Յեթե տան մեջ կա ներքին հեռախոսային կապ, ապա անհրաժեշտ է սահմանել հեռախոսային կապ դիտողության պոստի և տան ՀՕՊ-ի պետի գտնված վայրի հետ (տնային վարչության գրասենյակը), իսկ պարապմունքի ժամանակ այդ կապը պետք է օգտագործել դիտողության պոստի տեղեկություններ ընդունելու և հաղորդելու մարզանքի համար:*

**Ձեռնարկ:** *«Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:*

## ԹԵՄԱ 8-ՐԴ

### Զեկուցումներ ու կարգադրություններ պայմանական նշաններով յեվ ազդանշաններով — 2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել պայմանական նշաններով ու ազդանշաններով զեկուցումներ ու կարգադրություններ ընդունել և հաղորդելը:*

Բովանդակությունը: *Պայմանական դրոշակներով և նշաններով ազդանշան տալը: Կապ ազդանշաններով: Ազդանշանելու մարզանք:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը կատարում է ողակի հրամանատարը, նախօրոք պատրաստելով պայմանական նշաններ, օրինակ, զանազան գույնի դրոշակներ կամ տարբեր ձևերի և գույնի ցուցիչներ (յեռանկյունի, բոլորակ):*

*Բացատրելով այս կամ այն նշանի պայմանական նշանակությունը (օրինակ, դեղին բոլորակը նշանակում է կայուն ԹՆ-ով քիմիական ռումբի պայթյուն, իսկ կանաչ գույնի քառանկյունին վոչ կայուն ԹՆ-ով քիմիական ռումբի պայթյուն): Ողակի հրամանատարը դասավորում է ողակի մարտիկներին տան և բակի զանազան տեղերում, իսկ ինքը մեկնում է դիտողության պոստը և այնտեղից ազդանշան է տալիս, իսկ մարտիկները դիտում են նրան և կատարում տրված ազդանշանների գրանցում: Տալով 10–15 ազդանշան (մի քանիսը ավելի լավ մարզելու համար կրկնելով), ողակի հրամանատարը հավաքում է ողակին և ստուգում է նրանց գրանցումները:*

Այնուհետև հերթականությամբ մարտիկներին ուղարկում է տալով նրանց ցուցումներ հաղորդելու 5–6 ազդանշան այդ միջոցին, յերբ մյուսները կատարում են ազդանշանների ընդունում:

**Ձեռնարկ:** «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»:

## ԹԵՄԱ 9-ՐԴ

### Կապի ողակի գործողությունն ըստ «Ոդային տագնապ» յեվ «Քիմիական տագնապ» ազդանշանների—4 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ըստ «Ոդային տագնապ» ազդանշանի գործելը:*

Բովանդակությունը: *Ողակի հավաք: Դիտողության պոստ նշանակելը և նրա աշխատանքը: Կապի կազմակերպումը:*

Մեթոդական ցուցումներ: *Պարապմունքը սկսվում է ըստ ողակի հրամանատարի տված «Ոդային տագնապ» ազդանշանի ողակը հավաքելով:*

*Հավաքակայան ներկայանալիս, ողակի հրամանատարը պետք է ստուգի պաշտպանական միջոցների (հակագազեր, սանիտարական ու հակաքիմիական ծրարներ) առկայությունը և սարքին լինելը: Ապա ողակի կողմից ուղարկում է յերկու մարդ դիտողության պոստը՝ մեկին դիտողի պարտականությունը կատարելու համար, իսկ մյուսին՝ կապավորի պարտականությունը կատարելու համար:*

*Դիտողության պոստերը նրանց կողմից գրավվելուց հետո, ողակի հրամանատարը մյուս մարտիկների հետ միասին անընդհատ կերպով նմանակեղծում է հրդեհիչ, քիմիական ու ֆուգասային ռումբերի ընկնելը: Յուրաքանչյուր ռումբի նմանակեղծումից հետո արվում է 3–5 րոպե դադար*

*Միաժամանակ ողակի հրամանատարը հանձնարարում է մարտիկներից մեկին հետևելու դիտող պոստի ազդանշաններին: Այդ մարտիկ կապավորը պետք է գտնվի այնտեղ, վորտեղ ոդային տագնապի պայմաններում ինքնապաշտպանության խմբի պետի կողմից պիտի դրվի կապի պոստ դիտողության պոստի հետ միասին (տես իր տան ՀՈՔՊ-ի պլանը):*

*Կատարելով իմիտացիա, ողակի հրամանատարն իր մոտ մնացած մարտիկների հետ միասին հետևում է, թե դիտող պոստի կողմից ճի՞շտ է վորոշվում վնասվածքի տեղն ու բնույթը, ինչպես և այն բանին, թե ազդանշանները ճի՞շտ են տրվում և*



*կապի պոստի կողմից ճի՞շտ են ընդունվում: Սրա համար կապի պոստը պարտավոր է ողակի հրամանատարին զեկուցել ընդունած ազդանշանների մասին (այսինքն, ինչպես նա պիտի զեկուցեր ինքնապաշտպանության խմբի պետին):*

*Այն դեպքերում, յերբ դիտողության պոստի մարտիկը նկատում է բակի, տան կամ հարեվան տերիտորիայում պայմանական ազդանշանով չնախատեսված վորևէ բան (որինակ, մի տան դռնից յերեխաները վազում են բակը), ապա նա պարտավոր է իր մոտ յեղած կապավորին ուղարկել զեկուցելու կարգ պահպանող ողակի հրամանատարին: Յերբ իր պոստից նա չի կարող ճշտորեն վորոշել, թե ինչպիսի ռումբ է պայթել (որինակ, բեկորային թե քիմիական), ապա նույնպես ուղարկում է կապավորի՝ ծանոթանալու պայթյունի տեղի հետ և անձամբ զեկուցելու ինքնապաշտպանության խմբի պետին:*

*Այնուհետև ողակի հրամանատարը իր մոտ է կանչում դիտողության ու կապի պարտականություններ կատարող մարտիկներին, իսկ իր մոտ յեղած մարտիկներին ուղարկում է նրանց տեղը: Դրանից հետո նորից կատարում է իմիտացիա, պայմանները բարձրացնելով (որինակ, միաժամանակ յերկու ռումբի պայթյուն տարբեր տեղերում, քիմիական ռումբի պայթյունի իմիտացիան հարևան բակում քամու փչած ուղղությամբ, հարևան բակերում ինչպես քամու փչած ուղղությամբ, նույնպես և քամուն հակառակ քիմիական տագնապի ազդանշան տալը):*

*Դիտողության պոստում գտնվող մարտիկները պետք է հագնված լինեն պաշտպանական հագուստ «պատրաստ» դրությամբ հակագազով:*

*Ոդում ինքնաթիռներ յերևալու ժամանակ հակագազը փոխադրում են մարտական դրության:*

*Պայմանականորեն ինքնաթիռներ յերևալու մասին ողակի հրամանատարը նախազգուշացնում է միջանկյալ խնդիր տալով դիտող կայանին:*

*Նկատելով քիմիական հարձակումը (ԹՆ ցող տալը, քիմիական ռումբ գցելը), դիտողը տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը:*

*Այս պարապմունքը ողակի հրամանատարը ավարտում է՝ կապավորներին նորից մարզելով ինչպես բանավոր, այնպես էլ հեռախոսով հրամաններ ու զեկուցումներ հաղորդելու ասպարեզում: Ընդսմին մարտիկները պետք է լինեն հակագազերի մեջ:*

Միաժամանակ ուսումնասիրվում են հեռախոսային գույքը ԹՆ-ից պաշտպանելու կանոնները:

Տվյալ թեման անց է կացվում երկու անգամ, մի անգամ ցերեկը, մյուս անգամ՝ երեկոյան (մթնում):

**Ձեռնարկ:** Նույնը, ինչ որ 1-ին թեմայի վերաբերյալ:

# VII. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ—10 ԺԱՄ

*(Խումբն ի մի հավաքելը)*

## ԹԵՄԱ 1-ԻՆ

### Ինքնապաշտպանության խմբի գործողությունները ըստ «Օդային տագնապ» ազդանշանի—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ինքնապաշտպանության խմբի օղակներին՝ համատեղ գործողությունների «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում:*

Բովանդակությունը: *Խմբակի օղակների հավաքը: Պոստերի նշանակելն ու նրանց աշխատանքը: Խմբի բոլոր միջոցները գործողության համար լրիվ պատրաստ վիճակի փոխադրելը: Այն բանի ստուգում, թե ինչպես են տան բնակիչները կատարում իրենց անելիքների կանոնները ՀՕՔՊ-ի և լուսաքողարկման պայմաններում: Օղակների հրամանատարների զեկուցումները ինքնապաշտպանության խմբի պետին ՀՕՔՊ-ի միջոցների դրության և օղակի պատրաստականության մասին: Խումբը կառավարելը:*

Մեթոդական ցուցումներ. *Պարապմունքը կատարում է ինքնապաշտպանության խմբի պետը: Մեկ-երկու օր առաջ խմբին տեղեկացվում է պարապմունքի օրվա ու թեմայի մասին: Պարապմունքից 2–3 ժամ առաջ տան մեջ հայտարարվում է սպառնալից դրություն: Օղակների հրամանատարները իմանալով սպառնացող դրություն հայտարարելու մասին, անհապաղ միջոցներ են ձեռք առնում իրենց օղակը հավաքելու համար և բացակայողներին փոխարինելով պահեստայիններով, օղակի դրության մասին զեկուցումով ներկայանում են ինքնապաշտպանության պետին: Ստանալով խմբի պետից ցուցմունք ամբողջ գույքը գործողության համար պատրաստ վիճակի փոխադրելու մասին, օղակների հրամանատարներն իրենց օղակի կազմի հետ*



*միասին ՀՕՔՊ-ի գույքը փոխադրում են գործողության պատրաստ վիճակի (պահեստից ստանում են գույք, գործիքներ, իրեր, վարակազերծման նյութեր, անհատական պաշտպանման միջոցներ և այլն): Կապի օղակը ստուգում է, թե արդյոք բոլոր բնակիչները գիտե՞ն սպառնալից դրություն հայտարարելու մասին:*

*Կատարելով այդ աշխատանքը (մոտավորապես 40–50 րոպե հետո) օղակների հրամանատարներն իրենց օղակներին բաց են թողնում տները: Խմբի պետը մեկ երկու ժամ հետո տալիս է «Օդային տագնապ» ազդանշանը և ստուգում է օղակների հավաքվելու արագությունը ըստ ազդանշանի և գործելու նրանց պատրաստականությունը: Անպայման ստուգում է, թե արդյոք բոլո՞ր մարտիկները հակաքիմիական պաշտպանության միջոցները փոխադրել են «պատրաստ» վիճակի:*

*Յուրաքանչյուր օղակը ինքնուրույն կերպով ձեռնամուխ է լինում կատարելու ըստ «Օդային տագնապ» ազդանշանի իր պարտականությունները: Պետը խմբի քաղղեկի հետ միասին շրջում են պոստերը և օղակների հավաքակայանները ստուգում են, թե գիտե՞ն արդյոք մարտիկներն իրենց պարտականությունները: Հետո տալիս է «Ավարտ» ազդանշանը և հավաքում խումբը ու կատարում պարապմունքի վերլուծությունը:*

*Այս պարապմունքը պետք է կատարել երեկոյան, որպեսզի հնարավոր լինի ստուգելու տան լուսաքողարկման դրությունը:*

**Ձեռնարկ:** «Իր տան ՀՕՊ-ի պլանը», 2. «Ինքնապաշտպանության խումբը», 3 «Բնակելի տան հակաօդային պաշտպանությունը»

## ԹԵՄԱ 2-ՐԴ

### Ինքնապաշտպանության խմբի գործողությունները ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի—2 ժամ

Նպատակը: *Սովորեցնել ինքնապաշտպանության խմբի օղակներին համատեղ գործողության՝ «Քիմիական տագնապ» ազդանշանի դեպքում:*

Բովանդակությունը. *Դիտողության պոստի աշխատանքը և «Քիմիական տագնապ» ազդանշան տալը: Զեկույց քիմիական հարձակման մասին: Պաշտպանության անհատական միջոցների գործադրում բոլոր պոստերի կողմից: Ինքնապաշտպանության խմբի գործողություններն ըստ «Քիմիական տագնապ» ազդանշանի: Սանիտարական քիմիական մշակում:*

Մեթոդական ցուցումներ․ Պարապմունքը կատարում է
ինքնապաշտպանության խմբի պետը։ Այս պարապմունքը հան-
գիստանում է առաջին թեմայի շարունակությունը։ Պարապմունքը
պետք է սկսել այն դրությունից, որի մեջ ողակները գտնվում
են «Օդային տագնապ» ազդանշանի ժամանակ։ Հետևաբար,
խմբի կադրը անհրաժեշտ է ուղարկել այն տեղերը, որտեղ նը-
րանք պետք է լինեն «Օդային տագնապ» ազդանշանից հետո։
Դրանից հետո ինքնապաշտպանության խմբի պետը մեկ
կամ յերկու մարտիկների հետ (որոնց նա հատկապես իր մոտ
է պահում որպես ոգնականներ) մի քանի տեղերում միաժա-
մանակ կատարում է քիմիական հարձակման իմիտացիա, պայ-
թեցնելով պայթուցիկ ծրարներ և վառելով չեզոք ծխադլաններ։
Կայուն ԹՆ–ով քիմիական ռումբի պայթյունը նմանակեղծ-
վում է փոքր պայթուցիկ ծրար պայթեցնելով, որը տալիս է
դեղին փոշու ամպ, իսկ տեղանքը կայուն ԹՆ–ով վարակելը
կատարվում է վարժական ԹՆ շաղ տալով կեղծ կամ հատկապես
պատրաստված ձաղարի շուրջը։ Կարելի յե վարժական ԹՆ փո-
խարինել նավթ շաղ տալով, պահպանելով հրդեհի տեսակետից
անհրաժեշտ նախազգուշական միջոցները։
Անկայուն ԹՆ–ով քիմիական ռումբերի պայթյունը նմանա-
կեղծվում է փոքր պայթուցիկ ծրար պայթեցնելով, որը տա-
լիս է կանաչ փոշու վոչ մեծ ամպ․ իսկ բուն կայուն ԹՆ–ի ամ-
պը նմանակեղծվում է չեզոք ծխադլաններ վառելով։
Նկատելով քիմիական հարձակման նշանները, դիտողության
պոստը տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը։ Քիմիական
ողակը անհապաղ պատրաստվում է քիմիական հետախուզություն
կատարելու, կատարում է այդ հետախուզությունը, պատրաս-
տում է և գազահանման աշխատանքների կատարման համար ան-
հրաժեշտ բոլոր միջոցները։ Հատուկ ուշադրություն պետք է
դարձնել վարակված տեղամասն արգելափակելուն։ Սանիտարա-
կան ողակը կատարում է սանիտարական հետախուզություն՝
ինչպես վարակված տեղամասում, այնպես էլ ԹՆ գործողների
ներգործման շրջանում և ոգնություն է ցույց տալիս այն անձե-
րին, որոնք պաշտպանական միջոցներ չեն ունեցել (դերակա-
տարներին)։
Կարգ պահպանող ողակն արգելում է մարդկանց հավաքվե-
լը նրանց համար վտանգավոր տեղերում։
Հրշեջ պոստերը հսկում են հակագազերը հագած։ Ինքնա-


պաշտպանության խմբի պետն ու քաղղեկն անձամբ ստուգում են
քառ «Քիմիական տագնապ» ազդանշանի խմբի մարտիկների կա-
տարած աշխատանքը և տալիս են աշխատանքի վայրում ան-
հրաժեշտ ցուցումներ։ Հետո տալիս է «Ավարտ» ազդանշանը։
Գազահանման աշխատանքի ավարտումից հետո անց է կացնում
խմբի մարտիկների սանիտարական քիմիական մշակումը։ Ապա
խմբի պետը խումբը հավաքում և կատարում է պարապմունքնե-
րի վերլուծումը։
Իմիտացիոն միջոցները պետք է նախորոք պատրաստված
լինեն։
**Ձեռնարկ**։ Նույնը, ինչ վոր 1-ին թեմայի վերաբերյալ

## ԹԵՄԱ 3–ՐԴ

### Ինքնապաշտպանության խմբի գործողությունները հրդեհների դեպքում—2 ժամ

Նպատակը․ Սովորեցնել խմբի ողակներին հրդեհների դեպ-
քում համատեղ գործողության։
Բովանդակությունը․ Ազդարարել բռնկված հրդեհի ոջախի
մասին (տան մեջ հրդեհային ազդանշան)։ Հրդեհը վերացնելու
ձեռնարկումներ։ Ձեռնարկումներ— հրդեհ վերացնելուց հետո։
Տուժածներին ոգնություն կազմակերպելը։
Մեթոդական ցուցումներ․ Պարապմունքը անց է կացնում
ինքնապաշտպանության խմբի պետը։ Պարապմունքը պետք է
սկսել «Օդային տագնապ» ազդանշանը տալով։ Այդ ազդանշանի
համաձայն բոլոր ողակները ցրվում են նշանակված տեղերը։
Դրանից 10 րոպե հետո ինքնապաշտպանության խմբի պետը կա-
տարում է հրդեհիչ ռումբի պայթյունի նմանակեղծում, այրելով
տուփի մեջ լցված նավթով խոնավված թեփ, կամ վառում է չե-
զոք ծխի դլան և բենգալյան կրակ։ Այնտեղ, որտեղ կա մեծ
բակ կամ պարտեզ կարելի յե (միայն հրշեջ պահպանության
թույլտվությամբ) այրել տաղավարի (беседка), սարայի մա-
կետներ (կամ պարզապես մի քանի հին արկղներ), յեթե այդ
վտանգ չի ներկայացնում մոտակա շինությունների համար։
Հայտնաբերելով առաջացած հրդեհը, հրշեջ ողակը ձեռնամուխ
է լինում այն հանգցնելու, գործադրելով ամենանպատակահար-
մար մեթոդները։
Մնացած ողակները հրդեհի դեպքում կատարում են իրենց
պարտականությունները։

Կարգ պահպանող օղակը կազմակերպում է դուրս տարվող իրերի պահպանումը (այդ կարելի յե նշել պայմանականորեն վորեվէ առարկաներով): Սանիտարական օղակը օգնություն է ցույց տալիս այրվածքների և վերքերի դեպքում, կազմակերպում է վտանգավոր գոտուց յերեխաներին, հիվանդներին ու ծերերին դուրս հանելու ու փոխադրելու գործը (դրա համար պետք է պատրաստել դերակատարներ):

Ինքնապաշտպանության խմբակի պետը քաղդեկի հետ միասին հսկում է օղակների աշխատանքներին և տեղում օղակների հրամանատարներին տալիս է անհրաժեշտ ցուցումներ:

Հրդեհի օջախը վերացնելուց հետո օղակը կարգի յե բերում իրեն և նյութական մասը: Կարգ պահպանող օղակը կազմակերպում է բնակիչներին իրեր վերադարձնելու գործը: Հետո ամբողջ խումբը հավաքվում է պարապմունքը վերլուծելու համար:

Իմիտացիոն միջոցները պատրաստվում են կանխապես:

**Ձեռնարկ:** Նույնը ինչ վոր 1-ին թեմայի վերաբերյալ

## ԹԵՄԱ 4-ՐԴ

### Ինքնապաշտպանության խմբի գործողությունը հարվածման համակցված օջախում—4 ժամ

Նպատակը: Տալ ինքնապաշտպանության խմբին գործնական հմտություններ համակցված հարվածումը վերացնելու ասպարեզում:

Բովանդակությունը: Դրության ուսումնասիրումը և վճիռ ընդունելը: Հարվածման համակցված օջախի վերացման համար խմբին խնդիր առաջադրելը: Խմբերն ու օղակները կառավարելը հարվածման օջախը վերացնելու պրոցեսում: Ինքնապաշտպանության խմբի աշխատանքի ամփոփումը: Սանիտարական մշակում: Գույքը հարվածման օջախը վերացնելուց հետո կարգի բերելը:

Մեթոդական ցուցումներ: Այս թեման անց է կացվում յերկու անգամ: Մի պարապմունքը կատարում է ինքնապաշտպանության խմբի պետը վորպես մարզիչ պարապմունք: Յերկրորդ պարապմունքը— քննական պարապմունք է, վորը կատարում է Պաշավիաքիմի շրջխորհրդի ներկայացուցիչը: Պարապմունքի որվա մասին ինքնապաշտպանության ամբողջ խմբին հայտնում են մեկից 2 օր առաջ:

Պարապմունքը սկսվում է՝ տան մեջ առավոտվանից սպառնալից դրության հայտարարելով: Ապա ցերեկը, իսկ ավելի լավ է յերեկոյան, տրվում է «Օդային տագնապ» ազդանշանը:

«Օդային տագնապ» ազդանշանից 10–15 րոպե հետո, պետք է իմիտացիոն միջոցներով նշանակել քիմիական հարձակում (ինչպես ասված է յերկրորդ թեմայի մեթոդական ցուցումների մեջ) և պետք է հետևել քիմիական օղակի աշխատանքի պատրաստվելուն:

Դրանից 5–10 րոպե հետո պետք է իմիտացիոն միջոցներով նշանակել հրդեհիչ ռումբերի պայթյունը (ինչպես ցույց է տրված 3-րդ թեմայի մեթոդական ցուցումների մեջ), ցանկալի յե 2–3 տեղերում և տարբեր ժամանակներում. օրինակ, սկզբում պայթել են յերկու տերմիտային ռումբ՝ մեկը ձեղնահարկում, մյուսը սանդղավանդակի վրա, իսկ 10 րոպեյից հետո, տեղեկացնում են, վոր միջանցքում հրդեհ է բռնկվել էլեկտրոցանցի խանգարվածության հետևանքով: Հրդեհի իմիտացիայի ժամենակից անհրաժեշտ է հետևել հրշեջ օղակի աշխատանքին և կապի օղակի՝ սկսված հրդեհի մասին ազդարարելու առթիվ տարվող աշխատանքին: Սանիտարական օղակի գործողության համար ներգրավվում են դերակատարներ, վորոնք նմանակեղծում են ԹՆ-ից, այրվածքից տուժածների, վիրավորների և այլն:

Հրդեհ բռնկելու հետ միասին տրվում է ֆուգասային ռումբի պայթյունի իմիտացիան: Պայթյունի իմիտացիան պետք է կատարել պայթուցիկ ծրար պայթեցնելու միջոցով: Ջարդերի տեղերը նշանակելու համար պետք է փորել, վորտեղ վոր հնարավոր է— փոսեր (ծայրահեղ դեպքում դնել ցուցիչներ):

Ֆուգասային ռումբի պայթյունից հետո, պետք է հետևել, թե ինչպես է կատարվում պայթյունի հետևանքների վերացումը: Հարվածման համակցված օջախների վերացման բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո հայտարարվում է պարապմունքի ավարտ. ինքնապաշտպանության խումբը հավաքվում է և կատարում է պարապմունքի վերլուծություն:

Այս պարապմունքների համար պետք է պատրաստել առնվազն 3–4 միջնորդ:

# ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ (ԻՊ ԽՈՒՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. Դերն ու անելիքը

1. Ինքնապաշտպանության խումբը հանդիսանում է բնակելի տան, ՀՈԲՊ-ի այն կազմավորումը, որը հակաօդային պաշտպանության բոլոր այն զորախմբերից ավելի շատ կարող է օգնության հասնել իր կամ հարևան տան բնակչությանը՝ հակառակորդի օդային հարձակման ժամանակ:

2. Ինքնապաշտպանության խմբի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա) սպառնալից դրության հայտարարվելիս՝ ԻՊ խումբը կատարում է ՀՈԲՊ-ի ծառայության հերթապահության խմբի անձնակազմից նշանակելով հերթապահներ.

բ) ըստ օդային տագնապ ազդանշանի ԻՊ խումբը ազդարարում է տան բնակչությանը օդային ու քիմիական հարձակման մասին, հսկում է, որ բնակչության կողմից կատարվեն անելիքների սահմանված կանոնները.

գ) ապահովում է տների լուսաքողարկումը.

դ) ապահովում է հասարակական կարգը, կանխում է խուճապն ու անկարգությունները.

յե) տան աշխատանքի ընդունակ բնակչության օգնությամբ ԻՊ խումբը անաշխատունակներին, հիվանդներին, յերեխաներին և օդային տագնապի մոմենտին փողոցում գտնվող քաղաքացիներին, տեղավորում է զանազան թաքստոցներում.

զ) բնակչությանն օգնում է բնակարաններն ու այլ շինությունները արագ կերպով պաշտպանողական դրության փոխադրելու.

է) կանխում է հրդեհները և հանգցնում սկսված հրդեհները.



ը) մաքրում է օդային ռմբակոծության հետևանքով առաջացած հողակույտերը.

թ) ցույց է տալիս առաջին անհետաձգելի օգնություն օդային հարձակումից տուժածներին.

ժ) ազդարարում է բնակչությանը հակառակորդների կողմից քիմիական միջոցներ գործադրելու մասին և աշխատանք է կատարում թունավոր նյութերով վարակված շենքերը, տեղանքն ու առարկաները անվնաս դարձնելու համար.

ի) կազմակերպում է բնակչությանը վարակված տեղամասերից (տեղանքից, տներից և այլն) դուրս հանելու գործը.

լ) կատարում է հարվածման օջախները շղթայապատելու աշխատանքը, պահպանում է տան բնակիչների իրերը.

խ) օժանդակում է ՀՈՊ-ի հատուկ մասերի մարտական աշխատանքներին:

3. Նայած պայմաններին, ինքնապաշտպանության խումբը կարելի յե օգտագործել օդային հարձակումներից տուժած հարևան տներին օգնելու համար:

4. Խումբը անհապաղ սկսում է վերացնել վնասվածքներն առանց սպասելու դրսից հատուկ ցուցումների ու օգնության:

5. Զգալի վնասվածքների առկայության դեպքում՝ խումբը առաջին հերթին կատարում է այն ձեռնարկումները, վորոնք նպաստում են կորուստները նվազեցնելուն և ապահովում են ՀՈՊ-ի ժամանող մասերի ու զորախմբերի հաջող աշխատանքը (վարակված տեղամասերի հետախուզությունն ու պաշտպանումը, անցարանների կառուցումը և բնակչությանը դուրս տանելը, հրդեհները հանգցնելը, տուժածներին անհետաձգելի օգնություն ցույց տալը և այլն):

## 2. Կազմը յեվ համալրում

6. ԻՊ խմբի համալրումը կատարում է տան ՀՈՊ-ի պետը ըստ տերիտորիալ հատկանիշի տան մեջ մշտապես ապրող քաղաքացիներից, Պաշավիաքիմի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերության սկզբնական կազմակերպությունների օժանդակությամբ:

7. Կամավոր կարգով խմբի կազմի մեջ ընդգրկվում են 18–50 տարեկան հասակի յերկսեռ աշխատավորները, առավելապես վոչ զորակոչային կոնտինգենտներից (առավելապես կանայք): Խմբի մեջ ընդունելու անհրաժեշտ պայման հանդիսա-

նում է ՀՕԲՊ-ի նորմաների նախնական հանձնումը (սանիտարա-
կան ողակը համալրելու համար օգտագործվում են առաջին հեր-
թին այն քաղաքացիները, որոնք հանձնել են «Պատրաստ եմ
սանիտարական պաշտպանության» նորմանները):

8. Պարտադիր կարգով ՀՊ խմբի մեջ են մտնում տնային
վարչության բոլոր շտատային աշխատողները (հաշվետարներ,
դռնապաններ, վառարան վառողներ, մոնտյորներ, հավաքա-
րարներ):

9. Ինքնապաշտպանության խումբը բաղկացած է կապի,
կարգ պահպանող, քիմիական, հրշեջ, սանիտարական ողակնե-
րից. յուրաքանչյուր ողակի ղեկավարում է իր հրամանատարը:

10. Միշտապես սպասարկվող տերիտորիայի սահմաններից
կատարած գործողությունների դեպքում, տեղամասի պետի կար-
գադրությամբ, միատեսակ ողակները (ԻՊ մի քանի խմբերի կազ-
մից) կարող են վերածվել դրուժինաների, մի քանի խմբերից
կարող են կազմակերպվել ՀՕԲՊ-ի ջոկատներ, որոնք աշխա-
տանքի ժամանակ յենթարկվում են ՀՕՊ-ի տեղամասի պետի
կողմից նշանակված համապատասխան պետին:

11. ՕՏ-ի ազդանշանով մարտիկների վոչ լրիվ հավաքվե-
լու դեպքում, հավանական բնական պակասը լրացնելու համար,
ինքնապաշտպանության յուրաքանչյուր խմբում պետք է ունենալ
դեր կոմպլեկտ (ռեզերվ) 20–25%-ի չափով: Այդ ռեզերվը
նույնպես բաժանվում է ողակների:

12. Շրջանային կամ տեղամասային ՀՕՊ-ի օրգանների հա-
տուկ կարգադրությամբ ինքնապաշտպանության խմբում կարող
է լրացուցիչ կազմավորվել տեխնիկական հատուկ ողակ, որի
մեջ ընդգրկվում են սպասարկող կազմի անձերը (մոնտյորներ,
վառարան վառողներ, ջուր անցկացնողներ և այլն) ողային
հարձակման հետևանքները վերացնելու համար (ջրմուղի վերա-
կանգնում, էլեկտրացանցի վերանորոգում):

13. Խմբում յեղած ողակների քանակը կարելի յե ավելաց-
նել յելնելով սպասարկվող տերիտորիայի ծավալից և առանձնա-
հատկություններից (և բուն իսկ շինությունների բնույթից),
ողակների քանակի աճման համեմատ բնականաբար և աճելու յե
վողջ խմբի ընդհանուր կազմը:

14. Այս դեպքում միատեսակ ողակները (քիմիական, հրշ-
շեջ, սանիտարական) միացվում և դարձվում են բաժանմունք-



ներ, վորոնց գլուխ դրված են բաժանմունքների հրամանատար-
ները:

15. Մեծ տան մեջ և զգալի չափով բնակչություն ունեցող
բնակելի մասերում կարելի յե կազմակերպել ինքնապաշտպա-
նության մի քանի խմբեր:

### 3. Անձնակազմի պարտականությունները

16. ԻՊ խմբին ղեկավարում է իր պետը, վորին ընտրում է
տան ՀՕՊ-ի պետը, Պաշավխաքիմի միշտապես տվյալ տանը
ապրող լավագույն ակտիվիստներից: Խմբի պետը պետք է անցնի
հատուկ պատրաստություն:

17. ԻՊ խմբի պետն անմիջապես յենթարկվում է տվյալ
տան ՀՕՊ-ի պետին և հաստատվում է ՀՕՊ-ի տեղամասի շտա-
բի կողմից:

18. ԻՊ խմբի պետի պարտականությունների մեջ մտնում է.

ա) խմբի ամբողջ կազմի ուսուցումն անմիջապես ղեկավա-
րումը և սիստեմատիկ մարզիչ վարժությունների կատարումը.

բ) ողային հարձակումների դեպքում խմբի ողակների գոր-
ծողությունների ղեկավարումը.

գ) խմբի ներսում և բնակչության մեջ սիստեմատիկ հրա-
հանգավորում անցկացնելը (հակահրդեհային ձեռնարկումների,
հակաքիմիական պաշտպանության, բժշկա-սանիտարական օգնու-
թյան և այլ հարցերի առթիվ).

դ) ԻՊ խմբի գույքի հաշվառումը, պահպանումը և ժամա-
նակին վերանորոգելը:

19. ԻՊ յուրաքանչյուր խմբում առանձնացվում է քաղղեկ,
վորին նշանակում է կուսակցության շրջկոմը տվյալ տան մեջ
միշտապես բնակվող կոմունիստներից առաջադրված— բնակելի
տան կուսակցական խմբի կողմից:

20. Իր գործնական աշխատանքում քաղղեկը հենվում է
տան կուսակցական ու կոմյերիտական խմբերի լայն աջակցու-
թյան վրա, սերտ կապ է պահպանում կուսակցության տեղա-
կան կոմիտեյի հետ և ՀՕՊ-ի տեղամասի կուս լիդերի հետ ու
հաշվետու յե նրանց առաջ իր աշխատանքի առթիվ:

21. Քաղղեկի պարտականությունները.

ա) խմբում կուսքաղ աշխատանք կատարելը.

բ) խմբի կուսկոմյերիտ կազմի բաշխումը ըստ ողակների.

գ) խմբի անձնակազմի հաջող ուսուցման ապահովումը.

դ) խմբում սոցմրցման և հարվածայնության կազմակերպումը․

ե) խմբում կարգապահությունն ու առողջ քաղաքական-բարոյական դրությունն ապահովելը․

զ) խմբի մարտական աշխատանքի քաղաքական ապահովումը։

22․ Ինչպես և խմբի պետը, քաղղեկը պետք է անցնի պատրաստման հատուկ դասընթաց։

23․ Օդային հարձակման պայմաններում ԻՊ խմբի ամբողջ կազմը կրում է հատուկ պարտականություն, մասնավորապես՝

ա) ԻՊ խմբի կապի օղակը (ջոկատ) օդային հարձակումների ժամանակաշրջանում օգտագործվում է դրության մասին տեղեկություններ հավաքելու համար և մշտական կապ է պահպանում (հեռախոսով, լրատարների միջոցով) ՀՕՊ-ի տեղամասի շտաբի հետ, ԻՊ հարևան խմբերի հետ և միլիցիայի պետերի հետ։ ՕՏ ազդանշանով բնակչությանը տեղեկացնում է օդային հարձակման մասին, հակառակորդի կողմից քիմիական նյութեր գործադրելու դեպքում տալիս է «Քիմիական տագնապ» ազդանշանը․

բ) կարգ պահպանող օղակը հերթապահություն է կատարում հատուկ պոստերում, կատարում է հարվածման օջախների շղթայապատման ծառայությունը, հսկում է, որպեսզի բնակչության կողմից պահպանվի լուսաքողարկման կարգապահությունը, բակում և տան մեջ կարգ է պահպանում, պահպանում է թողնված իրերը․

գ) հրշեջ օղակը հերթապահություն է կատարում հրշեջ պոստերում, կազմակերպում է առաջացած հրդեհները հանգցնելու գործը, կատարում է տան մեջ հրդեհաշեջման պրոֆիլակտիկայի ասպարեզում անհրաժեշտ ձեռնարկումները։

դ) քիմիական օղակը կատարում է հարվածման քիմիական օջախների հետախուզություն, կատարում է գազահանման և վարակված տեղամասերում փողվածքներ և անցարաններ պատրաստելու աշխատանքներ, ապահովում է բնակչությանը վարակված շրջանից դուրս բերելու գործը․

ե) սանիտարական օղակը ծառայություն է կատարում առաջին օգնության պոստերում և պատրաստում է սանիտարական դիրք, կազմակերպում է տուժածներին դուրս հանելը և ցույց է տալիս նրանց առաջին անհետաձգելի օգնությունը։

24․ ԻՊ խմբի մարտիկները տան բնակիչների նկատմամբ



բացի այդ կրում են հրահանգչական ֆունկցիաներ, սովորեցնում են տագնապի ազդանշանների դեպքում անելիքների կանոնները, առձեռն միջոցներով հրդեհ հանգցնելը, լուսաքողարկման ամենապարզ միջոցները, հակաքիմիական պաշտպանության անձնական միջոցներից օգտվելը, պարզ սանիտարական ինքնօգնություն ու փոխադարձ օգնություն ցույց տալու ձևերն ու միջոցները։

## 4. Խմբերի կազմավորումն ու պատրաստումը

25․ ԻՊ խումբը կազմակերպում է տան ՀՕՊ-ի պետը (տան կառավարիչը, պարետը) ՀՕՊ-ի տեղամասի շտաբի ղեկավարությամբ և տան կուսակցական, կոմերիտական խմբի, ինչպես և Պաշավիաքիմի, Կարմիր խաչի, Կարմիր մահիկի ընկերության սկզբնական կազմակերպությունների մասնակցությամբ։

26․ Խմբերին մարտական ու վարժական գույքի մատակարարելը, պարագաների, պահեստի և ազդանշանի դեպքում հավաքվելու համար շենքեր, ինչպես և սովորեցնելու միջոցներ հայթայթելը կազմում են տնային վարչության պարտականությունը։

27․ Խումբը հանդերձավորելու համար, առաջին հերթին հատկացվում են տվյալ տան վարչության մեջ առկա գույքը, ինչպես և առձեռն միջոցները․ պակասող գույքը պետք է ձեռք բերել տնային վարչության միջոցների հաշվին, համաձայն տեղական խորհրդի բնակվարչության կողմից հաստատված նախահաշվի։

28․ Խմբի անձնակազմը պատրաստվում է Պաշավիաքիմի օրգանների կողմից՝ տնային վարչության նախահաշվով առանձնացված միջոցներով։

29․ ԻՊ խումբը համարվում է կազմավորված՝ միայն պատրաստության սահմանված դասընթացքը անցնելուց հետո, պատրաստված ղեկավար կազմի (պետ, քաղղեկ և խմբի օղակների հրամանատարներ) առկայություն և անհրաժեշտ ամբողջ գույքով հանդերձավորվելու դեպքում։

30․ Ձևավորումը (հաստատումը) կատարվում է ՀՕՊ-ի տեղամասի շտաբի կողմից, ԻՊ խմբի ստուգողական ուսուցում կազմակերպելու միջոցով։

31․ Բացի մասնագիտական ուսուցումից, խմբի մարտիկները պետք է պատրաստվեն միմյանց փոխարինելու հմտություններ

րով, այն հաշվով, վորպեսզի անհրաժեշտ դեպքում ապահովվի մարտիկների միաժամանակ մասնակցությունը հարվածման կարևորագույն միատեսակ օջախների վերացման (հրդեհների մարումը, գազահանման աշխատանքի կատարումը և այլն):

32. Հետագայում խմբի անձնակազմը սիստեմատիկորեն մասնակից է դարձվում ուսումնական պարապմունքների և մարզիչ վարժություններ անցկացնելուն (վոչ պակաս ամիսը մեկ անգամ)․ բացի այդ ՀՈՊ-ի օրգանների ցուցումներով խումբը մասնակից է դարձվում ծովա-ոդային պաշտպանության հատուկ վարժություններին ու մանեվրներին:

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԵՐՁԱՎՈՐՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

| №№ ըստ կարգի | Գույքի անունը | Քանակը: Ընդամենը խմբում | Քանակը: Վորից: Խմբի ղեկավարի մոտ | Ողակներում: Կապի | Ողակներում: Քիմիական պաշտպանության | Ողակներում: Հրշեջ | Ողակներում: Կարգ-կանոնի պահպանման | Ողակներում: Սանիտարական |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Հակագազեր | 26 | 3 | 4 | 5 | 5 | 5 | 4 |
| 2 | Կոմբինեզոններ | 5 | — | — | 5 | — | — | — |
| 3 | Պաշտպանական գոգնոցներ | 4 | — | — | — | — | — | 4 |
| 4 | Պաշտպանական թիկնոցներ | 7 | 2 | — | — | — | 5 | — |
| 5 | Ռեզինե կոշիկներ (զույգ կամ պաշտպանական չուլքիներ) | 11 | 2 | — | 5 | — | — | 4 |
| 6 | Ռեզինե ձեռնոցներ | 11 | 2 | — | 5 | — | — | 4 |
| 7 | Մաղպատգարակներ | 2 | — | — | 2 | — | — | — |
| 8 | ՌԴԳ—1 գործիքներ | 1 | — | — | 1 | — | — | — |
| 9 | Քիմհետախույզների պայուսակներ | 1 | — | — | 1 | — | — | — |
| 10 | Սանիտարական պայուսակներ | 1 | — | — | — | — | — | 1 |
| 11 | Հայարիպրիտային ծրարներ | 26 | 3 | 4 | 5 | 5 | 5 | 4 |
| 12 | Անհատ վիրակապական ծրարներ | 26 | 3 | 4 | 5 | 5 | 5 | 4 |
| 13 | Գոտկակացիններ | 5 | — | — | — | 5 | — | — |
| 14 | Սաղավարտներ | 5 | — | — | — | 5 | — | — |
| 15 | Կարաբինով գոտիներ | 5 | — | — | — | 5 | — | — |
| 16 | Սանդուխտ-ձողեր | 1 | — | — | — | 1 | — | — |
| 17 | Լինգեր | 2 | — | — | — | 2 | — | — |
| 18 | Կռաձողեր | 2 | — | — | — | 2 | — | — |
| 19 | Մեծ կացիններ | 2 | — | — | — | 2 | — | — |
| 20 | Երկաթե մեծ բահեր | 4 | — | — | — | 4 | — | — |
| 21 | Սուլիչներ*) | 6 | 1 | 1 | 1 | 1 | 2 | — |
| 22 | Շրջափակման նշաններ | 10 | - | — | 10 | - | — | — |
| 23 | Ազդանշանային դրոշների կոմպլեկտներ | 4 | — | 2 | 1 | — | 1 | — |
| 24 | Սանիտարական պատգարակ | 1 | — | — | — | — | — | 1 |
| 25 | Թևի նշաններ*) | 26 | 3 | 4 | 5 | 5 | 5 | 4 |
| 26 | Էլեկտրական լապտերներ | 2 | 1 | — | — | - | — | 1 |
| 27 | Фонарей «Летучая мышь» | 6 | — | 1 | 1 | 2 | 1 | 1 |
| 28 | Տնային դեղարկղներ | 1 | — | — | — | — | — | 1 |
| 29 | Դաշտային գրքույկներ*) | 6 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

Ծանոթություն.—1) Այն գույքը, վոր նշանակված է*) նշանով 1–16 ներառյալ հերթական համարներով թվարկված գույքը ձեռք է բերվում տնային վարչության հաշվին և օգտագործվում է բացառապես ուսուցման կարիքների և հարձակումների դեպքում գործածությունների համար:

2) Մնացած գույքը օգտագործվում է տան մեջ յեղած տնտեսական և հրշեջ գույքից և կամ առձեռն միջոցներից հարմարեցնելով:

3) Գազահանող նյութերը, ոժանդակ գույքն ու մատերիալները (սանդուղքներ, փրկարար պարաններ, հրշեջ դույլեր ու տակառներ, ավազով արկղներ, հնոտի, խծուծ), գազահանման զանազան պարագաներ (տակառներ, դույլեր, վրձիններ, ճելոպ, սավոկներ, թիեր, քլորակիր կրելու արկղներ և այլն) հավաքում և մթերում է տնային վարչությունը անհրաժեշտ յեղածին չափ:

4) Խմբի կազմում մի քանի միատեսակ ողակներ լինելու դեպքում գույքի պահանջը համապատասխան չափով ավելանում է:

5) Բացի տաբելում մատնանշված գազահանման գործիքները ԹՊ խմբին կարելի յե հայթայթել մեկ կամ յերկու ՎԴԳ-ի գործիքներ:

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՏԻՊԱՅԻՆ ՀԱՍՏԻՔԸ

| № | Պաշտոնների անունները | Անձերի քանակը |
|---|---|---|
| 1 | Խմբի պետ | 1 |
| 2 | Քաղղեկ | 1 |
| 3 | Գույքի վարիչ | 1 |
| | Ընդամենը | 3 |
| | **1. ԿԱՊԻ ՕՂԱԿ** | |
| 4 | Օղակի հրամանատար | 1 |
| 5 | Կապավորներ | 3 |
| | Ընդամենը | 4 |
| | **2. ԿԱՐԳ. ՊԱՀՊԱՆՈՂ.** | |
| 6 | Օղակի հրամանատար | 1 |
| 7 | Շարքայիններ | 4 |
| | Ընդամենը | 5 |
| | **3. ՀՐՇԵՋ ՕՂԱԿ** | |
| 8 | Օղակի հրամանատար | 1 |
| 9 | Հրդեհաշեջներ | 4 |
| | Ընդամենը | 5 |
| | **4. ՔԻՄԻԱԿԱՆ ՕՂԱԿԸ** | |
| 10 | Օղակի հրամանատար | 1 |
| 11 | Քիմիկներ | 4 |
| | Ընդամենը | 5 |
| | **5. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՕՂԱԿ** | |
| 12 | Օղակի հրամանատար | 1 |
| 13 | Սանիտարներ | 3 |
| | Ընդամենը | 4 |
| | Գումարը | 26 |



## ՊԱՅԹՈՒՑԻԿ ԾՐԱՐՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Իմիտացիոն պայթուցիկ ծրարները գործադրվում են ավիառումբերի պայթյունը նմանակեղծելու համար։

Պայթուցիկ ծրարները տալիս են ձայնով ու տեսքով 76 մմ. շրապնելի պայթյունը հիշեցնող պայթյուններ (պայթյունի դեպքում գոյանում է վոչ մեծ սպիտակ կամ մոխրագույն ամպ)։

Պայթուցիկ ծրարի գործողությունը կատարվում է բիկֆորդյան քուղը վառելուց 7–8 վայրկյան հետո։

Պայթյունի դեպքում ծրարի տուփի մասնիկների, հողի կտորտանքի և այլնի թռիչքի շառավիղը կարող է հասնել 7–9 մետրի.

Պայթուցիկ ծրարի քաշը մոտ 80 գրամ է։

Վերջնականապես պատրաստված պայթուցիկ ծրարը իրենից ներկայացնում է մի խորանարդ մեծ չափով կլորացրած կողերով և կողքերից մեկի միջով դուրս յեկող բիկֆորդյան քուղով։ Ծրարի լայնությունը հավասար է մոտավորապես 55 մմ.։

Պայթուցիկ ծրարը բաղկացած է կարդոնե «ա» տուփից, վորի բացվածքի վրա սոսինձով փակցված է բիկֆորդյան 90 մմ. յերկարությամբ «բ» քուղը (նկ. 1)։

Տուփի մեջ լցված է 40 գր. վառոդային «գ» խառնուրդ, վորը բաղկացած է 50% մանրահատիկ ծխատու վառոդից և 50% վառոդափոշուց։

Կարդոնե տուփը դրսի բոլոր կողմերից փաթաթված է մի քանի (2–3) շերտ «դ» շպագատով կամ ժապավենաթելով։

Այդ փաթաթի վրայից, ավելի ամուր շապիկ կազմելու և վառոդի խառնուրդը խոնավությունից ապահովելու համար տուփը ծածկվում է «ե» գուդրոնի հաստ շերտով։

Օգտագործման համար ավելի հարմար լինելու և մի քանի պայթուցիկ ծրարներ միմյանց կպչելուց խուսափելու համար, նրանք վերևից ծածկվում են փայտի թեփի բարակ շերտով։

Բիֆորդյան քուղի արտաքին մասը մոտ 70 մմ. յերկա-

րությամբ փաթաթվում է «Վ» ծխախոտաթղթով, ընդվորում նրա բոցավառումը ապահովելու համար քուղի ծայրը նախապես ծածկվում է վառոդային «Ը» յուղվածքով:

Պայթուցիկ կապոցի ծրարը բոցավառվելու համար բիկֆորդյան քուղի վրայից պոկում են թղթի թասակը, հանում լուցկին (ուժեղ քամու ժամանակ լավ է վերցնել միանգամից 2–3 լուցկի), վերցնում են պայթուցիկ ծրարը աջ ձեռքը և բիկֆորդյան քուղը սղմում ցուցամատի և բութ մատի միջև: Լուցկին բիկֆորդյան քուղի վրա պետք է տեղավորել այնպես, վորպեսզի նրա գլուխը ամուր պառկի բիկֆորդյան քուղի ծայրին(Նկ.




Նկ. 1 Պայթուցիկ ծրարի կտրվածքը

2): Լուցկու տուփը վերցնելով ձախ ձեռքը յեռանդուն կերպով քսում են լուցկու գլխին: Վառվող լուցկուց բոցավառվում է նաև բիկֆորդյան քուղը: Բիկֆորդյան քուղը բոցավառվելուց հետո պայթուցիկ կապոցը արագորեն նետում են նշված ուղղությամբ՝ իրենից 20–30 քայլ հեռու:

Պայթուցիկ ծրարի բոցավառումը կարելի յե կատարել նաև մատների, բիկֆորդյան քուղի ու լուցկու այլ դրությամբ: Կարելի յե պայթուցիկ ծրարը բռնել ձախ ձեռքում, իսկ լուցկու տուփը՝ աջ: Այս դեպքում վարվում են այնպես, ինչպես ցույց է տրված նախորդ դեպքում, բայց բիկֆորդյան քուղը բոցա-



վառվելուց հետո պայթուցիկ ծրարն արագ պետք է քցել աջ ձեռքի մեջ և նետել (Նկ. 3):

Բոլոր դեպքերում լուցկու տուփը պետք է քցել գետին իրեն մոտ, կամ վորոշ փորձառություն ունենալու դեպքում, դնել դըր-պանում, թեվածածկի մեջ և այլն:

Միշտ պետք է նկատի ունենալ, վոր բիկֆորդյան քուղի վերջավորությանը, վորը ծածկված է վառոդախոշով, մատները չափազանց մոտիկ դնելը կարող է մատների ծայրերի այրվածք



Նկ. 2. Պայթուցիկ ծրարը բոցավառվելու պրիոմը

առաջացնել: Նկ. 4-ում ցույց է տրված մատների նման սխալ դրվածքը, պայթուցիկ ծրարի բոցավառման ժամանակ, վորպիսի դեպքերում մատների այրվելն անխուսափելի յե:



Նկ. 3. Պայթուցիկ ծրարով բոցավառվելու պրոցեսի մի վարիանտ

Ուժեղ քամու բացակայության դեպքում, պայթուցիկ ծրարը կարելի յե բոցավառել, բիկֆորդյան քուղի ծայրին մոտեցնելով մեկ կամ մի քանի վառվող լուցկիներ:

Պայթուցիկ ծրարը պետք է քցել ավելի շատ առաջ, և վոչ թե վերև և այն հաշվով, վորպեսզի մարդիկ չկարողանան ընկնել պայթուցիկ կապոցի գործողության գոտին, վորի շառավիղը 7–8 մետր է:

Սարքին յեղած պայթուցիկ ծրարները ճիշտ վառվելու դեպքում բոլորովին անվտանգ են:

Պայթուցիկ ծրարները գործադրելուց առաջ պետք է ծրարները մանրակրկիտ ստուգել:

Վտանգավոր է գործադրել պայթուցիկ ծրարները հետևյալ թերություններ ունենալու դեպքում՝

ա) Յեթե բիկֆորդյան քուղը խիստ ծռմռված կամ կոտրված է, կամ նրա ծայրը այնպես է բացված, վոր քուղի խողովակից վառոդը թափվել է (նման պայթուցիկ կապոցները, պայթուցիկ լիցքի մեջ մի ակնթարթում կրակ ցայտելու հետևանքով կարող են ձեռքի մեջ պայթել).

բ) Բիկֆորդյան քուղը տուփին ամրացված տեղից շարժվել կամ պոկվել է (նման պայթուցիկ ծրարի բոցավառման ժամա-



Նկ. 4. Մատների սխալ դիրքը բոցավառման ժամանակ

նակ, կայծը կարող է թափանցել պայթուցիկ լիցքի մեջ՝ առաջացնելով ձեռքի մեջ այդ լիցքի վաղաժամ գործողություն. մյուս կողմից նման պայթուցիկ ծրարները կարող են լրիվին գործելուց հրաժարվել, յեթե նետելիս բիկֆորդյան քուղն ընկնում է.

գ) Ծրարի արտաքին մակերեսը վնասվել է մինչև կարդոնի տուփի մերկանալը, կամ միջանցիկ ճեղքվածքներ ունի, վորտեղից կարող է վառոդը թափվել (նման պայթուցիկ ծրարները արդյունք տալ չեն կարող կամ կայծ ընկնելու դեպքում վաղաժամ կպայթեն կամ ձեռքի մեջ կամ թռիչքում):

Խստիվ արգելվում է պայթուցիկ ծրարներ քցել բնակելի վայրերում կամ վառելանյութերին մոտիկ:



Պայթուցիկ ծրարները ձեռքի մեջ պահելը, վորպեսզի ոդում պայթի, նույնպես խստիվ արգելվում է, քանի վոր այս դեպքում հնարավոր է, վոր ձեռքի մեջ կամ քցողին մոտիկ պայթի:

Պայթուցիկ ծրարի մոտ ծխելը չի թույլատրվում, քանի վոր նրանք կարող են կայծից հեշտությամբ բոցավառվել:

Պայթուցիկ տուփը գործելուց հրաժարվելու դեպքում, նրան մոտենալ թույլատրվում միայն այն դեպքում, յեթե լիակատար վստահություն կա, վոր բիկֆորդյան քուղը հանգել է և պայթյուն չի սպասվում, բայց համենայն դեպս վոչ շուտ քան 1 րոպե հետո:

Չպայթած պայթուցիկ ծրարները կրկին անգամ բոցավառելը, ինչպես այդ ծրարների մեջ վորևէ ուղղում կատարելն արգելվում է: Չպայթած բոլոր պայթուցիկ ծրարները պետք է հավաքել և տեղն ու տեղը վոչնչացնել, կամ, հանձնել պարապմունքի ղեկավարի ցույց տված տեղերը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ցուցումներ բնակելի տների ինքնապաշտպանության խմբերի շարքային կազմի ուսուցման առթիվ 3
1. Քաղպատրաստություն 9
2. Քիմիական ողակի հատուկ պատրաստություն 13
3. Հրշեջ ողակի հատուկ պատրաստություն 23
4. Սանիտարական ողակի հատուկ պատրաստություն 31
5. Կարգ պահպանող ողակի հատուկ պատրաստություն 37
6. Կապի և դիտողության ողակի հատուկ պատրաստություն 46
7. Ինքնապաշտպանության խմբի ընդհանուր պատրաստությունը 54
8. Ինքնապաշտպանության խմբի ժամանակավոր կանոնադրություն 60
9. Պայթուցիկ ծրարների տակտիկա-տեխնիկական տվյալներն ու նրանց գործադրման միջոցները 69

Թարգմանիչ՝ Բ. Ղուկասյան
Պատ. խմբագիր՝ Վ. Բոյաջյան
Լեզվական խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռհանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Շ. Գարագաշ
Գլավլիտի լիազոր՝ Վ—1230. Հրատ. 4820.
Պատվեր 193. Տիրաժ 1000.
Թուղթ 62×94. Տպագր. 4,5 մամ.
Հանձնված է արտադրության 25 փետրվ. 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 13 օգոստոսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0276634

ԳԻՆԸ 2 Ռ. 20 Կ.

27

13 121

**ПРОГРАММА**

Подготовки рядового состава групп самозащиты жилых домов

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.